№ 113 ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ 25

1908

ԿԻՐԱԿԻ ՄԱՅԻՍԻ 25 № 113

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տելեֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ
Տելեֆօն № 253.

Զգրաշէնի հայոց դպրոցի բարերար, չարագործի ձեռքով սպանված

ՏԻԳՐԱՆ ԳԻՒԼՆԱԶԱՐԵԱՆՑԻ

տարելիցը կատարվելու է նրա գերեզմանի վրա, Խօջիվանքում, պատարագը վերջանալուց յետոյ, այսօր, կիրակի, մայիսի 25-ին, ժամը 11-ին։ Ուստի այդ մասին յայտնում ենք հանգուցեալի յիշատակը յարգող ընկերներին և բարեկամներին։

Կազմակերպողներ՝ Գ. Մեհրաբեան, Մ. Զաչկեան, Ս. Բարսեղեան

կ. 1—1

Մայիսի 25-ին, առաւօտեան ժամը 11-ին, Բօրսայի դահլիճում (Армянскій базаръ, домъ Кредитнаго О-ва)

Կաթողիկոսական ընտրութեան առիթով

կայանալու է

ՆԱԽՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ

ԺՈՂՈՎ

Խնդրվում է ընտրված լիազօրներին և ծխական պատուիրակներին ներկայ լինել, առանց սպասելու հրաւէրի։

(հ. կ.) առ. 2—2

Նախազգուշացումն

Դ. Զ. ՍԱՐԱՋԵՎ Д. З. Сараджевъ

ԹԻՖԼԻՍԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԻՑ

Նորերս ի վաճառ է հանվել օղի (столовое вино)

„ԸՆԿ. Գ. Մ. ՍԱՐԱՋԵՎ" „Т-во Г. М. Сараджевъ"

ֆիրմայով և մերին կատարելապէս նման էտիկէտներով, նպատակ ունենալով մոլորեցնել պ. պ. սպառողներին, մեր ֆիրմայի հռչակով օգտվելու նպատակով։

Թողնելով դատարանին ապրանքի տարածման այդպիսի մի ձևի գնահատութիւնը, գրասենեակը խնդրում է յարգելի հասարակութեան ուշադրութիւնը դարձնել ֆիրմայի էտիկէտների վրա անուան և հօրանուան սկզբնական „Դ. Զ." „Д. З." տառերին, նոյնպէս գործարանի դրօշմի՝ «այծեամը ժայռի վրա»։

(օ. մ.) առ. 25—23

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. Բաքայեանը

այս ամառ շարունակելու է ընդունել ներքին և ջղային հիւանդներ Կիսլովօդսկում և Եսսենտուկում, մայիսի 16-ից մինչև սեպտեմբերի 15-ը։

[չ. ու. կ.] ա. 12—11

ԲԺՇԿԱՊԵՏ

Գ. ԹԱԴԷՈՍԵԱՆ

Մայիսի 20-ից կը վերսկսի հիւանդների ընդունելութիւնը կովկասեան հանքային ջրերում։

Հասցէն՝ Եսսենտուկի, Верхняя Курсовая ул., дача Введенской.

(ե. հ. կ.) առ. 10—8

ԿԱԶԴՈՒՐՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Թիֆլիսի մի քանի շրջաններում ջերմ քննութեան առարկայ է դարձել դպրոցական մանուկներին ամարանոց ուղարկելու խնդիրը։

Դպրոցներում սովորող մանուկները ամարանոցի պահանջ են զգում թէ այն պատճառով, որ մանուկներին հարկաւոր է այնպիսի մի տեղ, ուր նրանք բնութեան ծոցում լինէին և կարողանային կազդուրել իրանց ձմեռվայ կեանքից յետոյ, և թէ այն, որ Թիֆլիսի տօթը ինքը չափազանց ծանր է մանուկների համար և նրանք պահանջ են զգում զով լեռնային օդի։

Այդ խնդիրը նշանակութիւն ունի ոչ միայն Թիֆլիսի, այլ և այն բոլոր քաղաքների համար, որոնք գտնվում են տափարակներում և ունեն խիտ ազգաբնակութիւն։

Մանուկների համար նշանակված և յարմարեցված ամարանոցները վաղուց գրաւել են մանկավարժների և հասարակութեան ուշադրութիւնը Արեւմուտքում և կրում են «ամարային գաղութներ» անունը։

Այդպիսի գաղութներ հաստատելու նպատակով նոյնիսկ կազմվել են շատ տեղերում և իւրաքանչիւր տարի նորնոր կազմվում են ընկերութիւններ և հիմնարկութիւններ, որոնք իրանց ձեռքն են առնում գաղութների նպատակայարմար կազմակերպութեան բոլոր ղեկավարութիւնը և հոգատարութիւնը։

Թիֆլիսի մի քանի շրջաններում խնդիրը դրված է որոշ կերպով, բայց ընդհանրապէս նա դեռ չէ դարձել մի այնպիսի գիտակցութիւն, որ թելադրէր մարդկանց կազմել պատկառելի գումարներ և համակրելի միտքն ու նախագիծը վերածել իրական ձեռնարկութիւնների։

Ցանկալի է, որ գործին տեղեակ և նրան նուիրված անձերը իրանց վրա նախաձեռնութիւն վերցնէին հանդէս գնելու նրան հրապարակի վրա, իբրև մանկավարժական և առողջապահական մի հարց, և առաջ մղվէին նրա մշակութիւնը և իրագործութիւնը։

Ամարային գաղութներ հիմնելու առաջարկը կը գտնէ համակրութիւն հասարակութեան մէջ։ Պէտք է միայն հասարակութեան խորին ուշադրութիւնը և ընդարձակ հետաքրքրութիւնը գրաւել դէպի այդ գործը։

Մենք շահագրգռված ենք, որ մեր մատաղ սերունդը մեծանայ-զարգանայ իբրև առողջ մարդկանց մի սերունդ, որ նա ազատ լինի ֆիզիկական այն աննախանձելի վիճակից, որի մէջ ընկել են մեր մատաղահաս ոյժերը և ժամանակից առաջ թուլացել ու թառամել, դառնալով անպէտք հասարակութեան համար։

Ա. Քալանթար

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ

V *)

Մենք ասացինք, որ 1905 թ. օգոստոսի 1-ին հրատարակված Բարձրագոյն Ուկազով յանուն Կովկասի Փոխարքայ կոմս Վօրօնցօվ-Դաշկօվի վերականգնվեցին 1874 թւի կանօնները և հայոց եկեղեցու վայելած ինքնավարական իրաւունքները դպրոցական գործի մէջ։ Այդ Ուկազով Կայսրը շնորհում է հայ-լուսաւորչական հոգեւորականութեան՝ յօգուտ ժողովրդի՝ լայն լուսաւորական գործունէութիւն ունենալու միջոցները և պատուիրում է Փոխարքային թոյլատրել կովկասեան փոխարքայութեան սահմաններում— բանալ եկեղեցիների և վանքերի առընթեր եկեղեցական-ծխական դպրոցներ 1874 թ. յուլիսի 19-ին Բարձրագոյն հաստատված կանօնների հիման վրա։

Կովկասի Փոխարքան անմիջապէս հրատարակեց «Ժամանակաւոր կանօններ» վերնագրով մի ժամանակաւոր կանօնադրութիւն, և թէև վերոյիշեալ Ուկազով իրան Փոխարքային է յանձնված հրատարակելու հայկական եկեղեցական դպրոցների նոր կանօնադրութիւն, բայց նա բարւոք համարեց առաջարկել հայոց եկեղեցու պետին ներկայացնել կանօնադրութեան նախագիծ և տալ իր բացատրութիւնները։ Ապա նա հաստատեց մի առանձին դպրոցական յանձնաժողով, նախագահութեամբ Հակկէլի, որին մասնակցելու հրաւիրեց նաև կաթողիկոսի կողմից երեք ներկայացուցիչներ։ Այդ յանձնաժողովի իբրև անդամ Փոխարքան հրաւիրեց և «Մշակ» լրագրի խմբագիր Ալ. Քալանթարին, իսկ իր կողմից նշանակեց մի քանի պաշտօնեաներ։ Իսկապէս Փոխարքան հաստատեց այդ յանձնաժողովը այն նպատակով, որ նա քննէ կաթողիկոսի առաջարկելի ծրագիրը, բայց ամենայն հայոց կաթողիկոսը հարկաւոր էր համարել ներկայացնել ոչ թէ կանօնադրութեան մի մանրամասն ծրագիր, այլ երեք կէտերից բաղկացած մի ընդհանուր ծրագիր, հետևեալ բովանդակութեամբ.

I. Հայոց եկեղեցու համար Ռուսաստանում վերականգնվում է իրաւունք անկախօրէն բանալ սեփական հանրակրթական կրթական հաստատութիւններ և ունենալ նրանց իրանց բացառիկ վարչութեան ներքոյ։ Բացման կարգը, պահպանութեան աղբիւրները, ուսման ընթացքը, դասարանների թիւը և առհասարակ այդ կրթական հաստատութիւնների ամբողջ կազմութիւնը և կառավարչութիւնը որոշվում են կանօնադրութիւններով, սահմանված ենթակայ եկեղեցական հաստատութիւնների կողմից։

II. Հայոց եկեղեցական իշխանութիւնները պարտաւորվում են հաղորդել կրթական հաստատութիւնների բացման մասին երկրի բարձր իշխանութեան։

III. Այդ կրթական հաստատութիւնների սաների զօրքի մէջ ծառայութեան մտնելու յետաձգման վերաբերմամբ, ուսումը աւարտելու համար, նրանց իրաւունքները՝ ծառայութեան կրճատված ժամանակամիջոցների և առհասարակ զինւորական ծառայութիւն վարելու մասին, ըստ ուսման, ինչպէս և ուսուցիչների զօրքի մէջ իրական ծառայութիւնից խաղաղութեան ժամանակ ազատվելու և պահեստի մէջ հաշւելու մասին, հայոց կրթական հաստատութիւնները հաւասարեցվում են իրանց ուսման ընթացքով համապատասխան կառավարչական կրթական հաստատութիւններին։

Այս համառօտ և ընդհանուր ծրագրին կաթողիկոսը կցել է մի ընդարձակ բացատրիչ գրութիւն։

Թէ համառօտ ծրագրի և թէ բացատրիչ գրութեան բովանդակութիւնից և էութիւնից պարզվում է այն անվիճելի հանգամանքը, թէ հայոց եկեղեցին պէտք է վայելէ Ռուսաստանում լիակատար աւտօնոմիայի իրաւունք դպրոցական գործի մէջ։

Կաթողիկոսի այդ ծրագրին հակադրեց Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Ռուդօլֆը մի այլ ծրագիր, որ առաջ կը բերենք յաջորդ անգամ։

Հ. Ս.

---

*) Տես «Մշակ» № 111.

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մոսկվայից հեռագրում են մեզ.

Այստեղ կայացաւ ծխական ժողով, նախագահութեամբ պ. Գասպարեանցի, կաթողիկոսական հարցի առիթով։ Ժողովը կայացրեց հետևեալ որոշումը. «Յանձնել Ստեփան Մամիկոնեանցին մասնակցել մայիսի 25-ին Թիֆլիսում կայանալիք խորհրդակցութեանը Մոսկվայի հայ գաղութի կողմից և յանձնարարել նրան պաշտպանել թեկնածութիւնը հետևեալ չորս եկեղեցականների, քառանուն ցանկի համար. 1) Մատթէոս արքեպիսկոպոս Իզմիրլեան, 2) Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, 3) Կարապետ վարդապետ, առաջնորդ Ատրպատականի, և 4) Բագրատ վարդապետ, փոխ-առաջնորդ Պարսկաստանի և Հնդկաստանի»։

—

Մեր ֆինանսների մինիստրութեան Պարսկաստանի ներկայացուցիչ Օստրօգրադսկու վրա կատարված յարձակման առիթով «Б. В.» լրագիրը հաղորդում է, որ փոխատու-խնայողական բանկի վարչութիւնը Պարսկաստանից Օստրօգրադսկուց ստացվել է առաւօտեան հեռագիր, որտեղ հաղորդվում է դէպքի մի քանի մանրամասնութիւնների մասին։ Յարձակումը ըստ երևոյթին կատարվել է նրա մասնաւոր բնակարանը կողոպտելու նպատակով, որը գտնվում է բանկի շինութեան մէջ։ Օստրօգրադսկին գնդակահարութեամբ պաշտպանվել է։ Կողոպտիչներն էլ իրանց կողմից սկսել են կրակել։ Գնդակահարութեան ժամանակ Օստրօգրադսկին քերծուածք է ստացել ոտից, որը ոչ մի վտանգ չէ ներկայացնում նրա առողջութեան համար։ Բանկի վարչութիւնը շնորհաւորական հեռագիր է ուղարկել Օստրօգրադսկուն վտանգից ազատվելու համար։

ՍՈՎԸ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

◆ Անատօլիայի հայաբնակ գաւառներից մէկի մի գիւղաքաղաքից, ի միջի այլոց, գրում են հետևեալ սրտառուչ տողերը Եգիպտոսի «Հայ Բարեգ. Ընդհ. Միութեան». «Եկեղեցւոյս քահանաներէն մէկը՝ կարօտեալի մը տունը այցելութեան կերթայ։ Ընտանիքը կը բաղկանայ եղեր 4—5 հոգիէ, որոնք նոյնիսկ չունէին օրական չորաբեկ հացը. անչափահաս զաւակացը համար թաքցուցած են լոկ ջուր. պզտիկները երկու գաւաթ խմելէ յետոյ դեռ չկշտանալով կըսեն. «մայրիկ, հատ մըն ալ խմելու ըլլանք՝ արդեօք կը կշտանա՞նք»։ Սոյն ցաւալի դրուագը յիշեալ քահանան արտասուալից պատմեր է իբր ականատես և ականջալուր...»։

◆ Աղեքսանդրիայէն կը գրեն, թէ ինչպէս Հայաստանի գրեթէ ամեն կողմը, Կիւրինի մէջ ալ գործաւոր դասակարգը մեծ կարօտութեան մատնուած է՝ տիրող առևտրական տագնապին և ուտեստի սղութեան հետևանօք։ Կիւրինի աղքատախնամը դիմած է Աղեքսանդրիոյ կիւրինցի ազգայիններուն՝ օգնութիւն մը հասցնելու համար տառապեալ ժողովուրդին։ Աղեքսանդրիոյ կիւրինցի ազգայինք ոչ միայն իրենց մէջ հանգանակութեան մը ձեռնարկած են, այլ և դիմած են Կահիրէի իրենց հայրենակիցներուն։ («Լուս.»)

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՌԱՆՈՒՆ ՑԱՆԿԸ

Մեր նախորդ յօդուածների մէջ կաթողիկոսական ընտրութեան վերաբերեալ մենք այն միտքն արծարծեցինք, որ հայոց եկեղեցու օրէնքներով հնարաւոր է ընտրել կաթողիկոս վարդապետներից և նոյնիսկ աշխարհականներից։ Սակայն պօլօժենիայի և նրան կից 1865 թ. հրահանգների զօրութեամբ աշխարհականներից կաթողիկոս ընտրելը վերացված է, ուստի և պէտք է աշխատել մտցնել ապագայ օրէնսդրութեան մէջ այդ սկզբունքը, մինչ, ինչպէս այն ժամանակ ևս բացատրեցինք, վարդապետներից կաթողիկոս ընտրելը այժմ իսկ կարելի է, եթէ միայն առաջարկվող կանդիդատները թեմակալ առաջնորդ կամ սինօդի անդամ են։ Պօլօժենիայի և հրահանգի զօրութեամբ կաթողիկոսական գահի թեկնածուներ համարվում են բոլոր բարձրաստիճան հոգեւորականները։ Արդ, թեմակալ առաջնորդը և սինօդի անդամը բարձրաստիճան հոգևորականներ են։

Այդ մտքով էլ, ինչպէս երևում է, հասկացել է Մոսկվայի հայ գաղութը, որ ծխական ժողով գումարելով որոշել է կաթողիկոսական 4 աւագագոյն կանդիդատների ցանկը կազմել երկու արքեպիսկոպոսներից և երկու վարդապետներից, որոնք ներկայումս վարում են առաջնորդական պաշտօններ Պարսկաստանում և պատկանում են Էջմիածնի միաբանութեան։ Այդ վարդապետներից մէկին, Բագրատ վարդապետ Վարդազարեանցին, մենք առաջինը առաջարկեցինք, իբրև արժանաւոր կանդիդատ վարդապետական դասի մէջ, ի նկատի ունենալով նրա վարչական ընդունակութիւնները, կրթական աստիճանը և մանաւանդ այն յատկութիւնը, որ այնքան սակաւագիւտ է մեր հոգևորականների մէջ, այն է՝ անարծաթասիրութիւնը և պարտաճանաչութիւնը։

Մոսկվայի հայերի առաջարկած քառանուն ցանկը եթէ յարուցանէ խիստ առարկութիւններ՝ այդ կը լինի Օրմանեան պատրիարքի վերաբերմամբ։ Այսօր կարելի է արդէն ընդունել իբրև մի անգամ ընդմիշտ հաստատված իրողութիւն, որ Մատթէոս Իզմիրլեանը հանդիսանում է այն առաջին թեկնածուն, որին հայ ազգը ամբողջովին կը ցանկար տեսնել Լուսաւորչի յաջորդ, բայց որովհետև տիրող օրէնսդրութեան զօրութեամբ կաթողիկոս կարող է հաստատվել և ոչ այն թեկնածուն, որ ազգի միահամուռ ցանկալին է, այլ երկրորդ թեկնածուն, ուստի երկրորդ թեկնածուի խնդիրը ահագին կարևորութիւն է ստանում։ Եւ ահա իբրև երկրորդ թեկնածու Օրմանեան պատրիարքը առաջարկվում է շատերի կողմից՝ նոյնիսկ մեր ռուսահայերիս մէջ։ Այսպէս, օրինակ, յայտնի է, որ Բագու, Շուշի, Մոսկվա, Նոր-Նախիջեւան ցանկութիւն են յայտնել տեսնել Օրմանեանին երկրորդ, իսկ ոմանք նաև առաջին թեկնածու։ Ռուսաստանի հայ հոգևորականութեան մէջ նոյնպէս Օրմանեանը շատ կուսակիցներ ունի, և, որքան մենք գիտենք, Էջմիածնի հոգևորականութիւնը մեծ մասամբ իր քուէն տալու է Օրմանեանին։ Թիւրքիայի հայ ժողովրդի և հոգևորականութեան տրամադրութեան մասին, դժբաղդաբար, մենք դեռ որոշ և ճշգրիտ տեղեկութիւններ չունենք։ Եթէ Թիւրքիայից եկող պատգամաւորներն ևս, աշխարհական թէ հոգևորական, հակված լինեն Օրմանեանի թեկնածութեան կողմը, այդ կը նշանակէ, որ նրա ընտրութիւնը ապահովված կը լինի, քանի որ ձայների մեծամասնութիւնը նրանցն է։

Այս ամենից պարզ է, որ Օրմանեանի թեկնածութեան վրա պէտք է նայել լուրջ կերպով, չարհամարհել այն ոչ-գործնական առարկութեամբ, թէ մենք ընտրում ենք կաթողիկոս Իզմիրլեանին, առաջին թեկնածուին և ոչ երկրորդին։ Ոչ, այդ հայեցակէտը սխալ է. եթէ մենք անպայման և անկեղծօրէն ցանկանում ենք կաթողիկոս տեսնել Իզմիրլեանին, մենք պէտք է առաջուց ապահովենք նրա ընտրութիւնը. բացի դրանից, մենք պէտք է ի նկատի ունենանք և մի կարևոր հանգամանք. կարող է պատահել, որ Իզմիրլեանի և Օրմանեանի թեկնածութեան պայքարի մէջ մի երրորդը անցնի պատահաբար, ինչպէս յաճախ պատահում է։ Եւ որպէսզի մենք կարողանանք մի որոշ և անդրդուելի եզրակացութեան յանգել Օրմանեան պատրիարքի թեկնածութեան մասին, մենք պէտք է աշխատենք պարզել, թէ Ռուսաստանի, Թիւրքիայի և Պարսկաստանի հայ ժողովուրդը ինչ տրամադրութիւն ունի Օրմանեանի վերաբերմամբ. արդեօք ցանկանում է տեսնել նրան երկրորդ թեկնածու, ճիշտ որ մեծամասնութեան ցանկութիւն է, թէ՞ արդիւն է մի փոքրամասնութեան կողմից մղված ագիտացիայի։

Եթէ պարզվեց, որ Օրմանեանի դէմ մաքառելը՝ առաջ կը բերի միայն այն, որ մի երրորդ՝ աւելի պակաս արժանաւոր թեկնածու կարող է անցնել, հարկ կը լինի մտածել այդ հանգամանքի մասին։

Կրկնում եմ, Օրմանեանի թեկնածութեան վրա թեթև աչքով չը պէտք է նայել, քանի որ նա ունի արդէն կուսակիցներ ժողովրդի մէջ։

Ահա այսօրվայ խորհրդակցութեան նպատակներից մինն էլ այդ է լինելու—պարզել մեր բռնելիք դիրքը՝ Օրմանեանի վերաբերմամբ, թերև երկրորդ թեկնածու։

Հ. Առաքելեան

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋԸ *)

Այլ էին հանգամանքները 1891—92 թ. և այլ են այժմ։ Այն ժամանակ խնդիրը հեշտանում էր և մասամբ շնորհիւ այն պարագայի, որ հրապարակի վրա դրված էր այնպիսի մի անսահման հեղինակութիւն, որ ունէր Խրիմեանը հայ ժողովրդի մէջ և որի առաջ խոնարհվում էին իրարից բոլորովին տարբեր ձևով մտածող անհատներ, որոնք ներկայացուցիչ էին այս կամ այն ուղղութեան։ Ներկայումս հայ հոգևորականութեան մէջ չը կայ այնպիսին, որին անպայման կերպով ցանկանային տեսնել կաթողիկոսական բարձր պաշտօնի մէջ։

Այդպիսի հոգևորական մենք չունենք։ Եւ այդ պատճառով՝ խնդիրն աւելի դժուար լուծելի է դառնում։ Բայց ամենահաւանական թեկնածուներ համարվում են Իզմիրլեան և Օրմանեան արքեպիսկոպոսները, և մեր կարծիքով իրաւամբ։ Սրանցից ոչ մէկին և ոչ միւսին անտես առնել չէ կարելի։ Եւ հասկանալի են այն հիմունքները, որոնց շնորհիւ անխուսափելիօրէն դրվում է այդ երկու խոշոր եկեղեցականների թեկնածութիւնը։ Նրանք երկուսն էլ ունեն առաւելութիւններ, աւելի կամ պակաս չափով, և ընդհակառակը՝ ունեն և՛ թերութիւններ։ Բայց և այնպէս, ինչպէս ասացինք, այս երկու արքեպիսկոպոսներն են ամենալուրջ թեկնածուները։

Որքան որ հասկանալի է մեզ համար սրանց թեկնածութիւնը, նոյնքան անհասկանալի է տեղապահ Սուրէնեանց արքեպիսկոպոսի բանագրօսիկ թեկնածութիւնը։

Արդեօք միմիայն նրա համա՞ր, որ նա այսօր բաղդի բերմամբ կարևոր պաշտօն ունի, տեղապահ է, թէ՞ այլ արժանիքների համար, որոնք գրաւական լինէին նրա թեկնածութեան, որ մենք չը գիտենք։ Մենք, ինչ որ գիտենք Սուրէնեանց արքեպիսկոպոսի մասին և ինչ որ լսել ենք նրա գործունէութեան մասին ու տեսել, կարող ենք համարձակ կերպով բացասական եզրակացութեան գալ։ Եթէ անցեալ ընտրութեան ժամանակ յիշվում էր և՛ հանգուցեալ Երեմիա եպիսկոպոսի թեկնածութիւնը, թէև տեղապահի, այդ միանգամայն հասկանալի էր, որովհետև նա թէկ որ վարչական շնորհք և տաղանդ ունէր, և եթէ նա կաթողիկոս լինէր, անպայման մեր լաւ կաթողիկոսներից մէկը կը լինէր որոշ տեսակէտներից, և գուցէ Էջմիածինն էլ այսօր՝ այս նիւթական և բարոյական աւերից ազատ կը լինէր։ Բայց ո՞վ է ներկայ տեղապահը՝ նախկին տեղապահի հետ համեմատած։ Երեմիա եպիսկոպոսը երկու և կէս տարվայ մէջ շատ գործեր կատարեց, յիշատակներ թողեց, որոնք այսօր գոհութեամբ են յիշվում, և այդ նպատակներն իրագործելում մասնակցել էին նրան իր լաւ խորհրդատուները։ Բայց ովքե՞ր են այսօր ներկայ Սուրէնեանց տեղապահին շրջապատողներն ու խորհրդատուները։ Այն ժամանակ կար Սեդրակեան սրբազանը, որը իր հեղինակութեամբ և լրջմտութեամբ պատկառանք և յարգանք էր ներշնչում ուրիշներին։ Իսկ այսօրվայ խորհրդականնե՞րը... և՛ ոչինչ, բացի ղղուանքից, որոնք ճիճուների և սողունների նման քարշ են գալիս նրա մօտ։

Սուրէնեանց արքեպիսկոպոսը երկար տարիներ վարել է առաջնորդական պաշտօններ մեր ամենակարևոր թեմերում, այն է՝ Երևանի, Աստրախանի և Թիֆլիսի թեմերում։ Եւ ի՞նչ է արել նա այդ թեմերում. արդեօք արե՞լ է այնպիսի մի գործ, որ իրաւունք տար նրա անունը թեկնածուների շարքում դնելու։ Մենք գոնէ այդպիսի գործ չը գիտենք։ Մենք այս գիտենք, որ նա ընդունակ է ամեն մի բարի և օգտակար գործ մեռցնելու իր կասկածամիտ բնաւորութեան շնորհիւ։

Հայ հասարակութիւնը չը գիտէ և չէ ճանաչում իր ներկայ տեղապահին և ուզենար էլ՝ անկարող պիտի լինէր ճանաչելու, որովհետև նա ապրել է միմիայն իր մտերիմների հետ, իսկ իր խնամքին յանձնված ժողովուրդը միշտ հեռու է վանել նա իրանից։

Այս թեթև ակնարկով գալիս ենք մենք մեր զարմանքը յայտնելու նրանց, որոնք այս կամ այն շարժառիթից ստիպված, ի միջի այլոց, յիշում են նաև Սուրէնեանց արքեպիսկոպոսի թեկնածութիւնը։ Մեր կարծիքով, եթէ կայ մէկը, որ անարժան է և անհամապատասխան կաթողիկոսական պաշտօնի համար, դա Սուրէնեանց արքեպիսկոպոսն է։

Եղիա

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Նոր-Բայազէտ, 18 մայիսի

Գարուն է։ Դրսի աշխատանքները եռում են ամենուրեք։ Դաշտերը զարդարվել են ցանքերով և խոտաբոյսերով։ Անասունները ազատված երկարատև ձմրան կապանքներից՝ արածում են ազատ արօտավայրերում։ Տաւարի բառաչը, ոչխարների մայիւնը, ձիաների խրխինջը՝ ճռուող թռչնակների մեղեդիների հետ խառնված՝ մարդու սիրտն են ուրախացնում, լսողի ունկը փաղաքշում... Պատկերը, տպաւորութիւնը գմայլեցուցիչ է, բայց արդիւնքը... Արդիւնքը՝ շատ քիչ։ Նայած բուսականութեան ընդհանուր տեսքին, կարելի է ասել, որ մինչև այժմս տիրող ցրտերի պատճառով բոյսի աճեցողութիւնը շատ դանդաղ է գնում։ Բայց ապագայի վերաբերմամբ յոյս կայ, որ ցանքերը առհասարակ լաւանան և առատ արդիւնք տան, եթէ միայն բնական պատահարները խղճան մեզ և անվնաս դարձնեն իրանց ագէնները մեր հողագործական արգասաւորութեան վերաբերմամբ...

Ցաւօք սրտի պէտք է յայտնեմ նաև մի բան, այն, որ մեզանում շատ հողագործներ ցանելով իրանց արտերը տեղական սերմացուներից, շատերի արտերում մի ամբողջ ամիս է՝ ինչ ծիլարձակումը չէ երևում. ասում են՝ սերմացուի մի մասը եղել է անցեալ տարվայ ցրտատար ցորեններից, միւս մասը փտած, խորշակահար հատիկներից։ Դա իրաւ որ ցաւալի իրողութիւն է հողագործի համար, որ հազիւ-հազ կարողացել էր սերմանել իր տափերը։ Այդպիսի արտերից մի քանիսում, ինչպէս լսեցի, գիւղատնտես պ. Կանդուրալեան, որ անցեալ շաբաթից այստեղ է, ցանել է տալիս կորնգան և այլ խոտաբոյսեր։ Ինչ վերաբերում է Ռուսաստանի ցորենին, դրանից շատ աննշան մաս է ցանված, սակայն բոյսի աճեցողութիւնը առայժմ հրաշալի է, նոյնիսկ տեղական սերմացուից աւելի լաւ է աճել և աւելի երկար հասակ ընդունել։ Թէ ինչ կը լինի վերջը՝ չը գիտենք։

Ամսիս 4-ին ուսուցիչ պ. Ն. Հայրապետեանց օրիորդաց դպրոցի դահլիճում մի դասախօսութիւն կարդաց զեմստվոյի մասին։ Դասախօսութիւնը բաժանել էր հետևեալ կէտերին.—1) ինչ է զեմստվօն, 2) չինովնիկական և ժողովրդական ներկայացուցիչների տնտեսութիւնը, 3) Ռուսաստանի պետական տնտեսութիւնը չինովնիկների ձեռքում մինչև 1864 թւականը, 4) ճորտութիւնը Ռուսաստանում և ճորտերի ազատութիւնը, 5) 1864 թւի զեմստվօն 6) զեմսկի նաչալնիկներ, 7) 1890 թւի զեմստվօն և դասակարգային ընտրութիւնները, 8) առաջին և երկրորդ զեմստվօների տարբերութիւնը և 9) զեմստվոյի նշանակութիւնը մեզանում։ Դահլիճը լի էր հետաքրքիր հասարակութեամբ։

Ինչպէս երևաց դասախօսութիւնից, Ռուսաստանի 33 նահանգներում արդէն մտցրված է զեմստվօ, որն իր ձեռքում ունի երկրի կուլտուրական տնտեսական գործը։ Եւ ամեն մի նահանգ իր զեմստվոյին հիմնարկութեամբ տարեկան 2—3 միլիօն րուբլի գումար է ծախսում ժողովրդական կուլտուրական պայմանների, երկրի բարեկարգութիւնների և տնտեսական դրութեան վերաբերութեամբ։ Վերջում պ. դասախօսը յայտնեց, որ զեմստվօն, թերև մի տեղական ինքնավարութիւն, ցանկալի է որ մտցվէր նաև մեզանում, որ մեծ բարիքներ կը բերէր մեր երկրի տառապեալ ազգաբնակութեան համար, բարեկարգելով և բարձրացնելով նրա ընկած և ամեն կողմից վտանգված դրութիւնը։

Գ. Սիմոնեան

—

Վաղարշապատ, 22 մայիսի

Ինչպէս երևում է լրագրութիւնից, Կովկասի շատ տեղերում սկսվել է արդէն կաթողիկոսական պատուիրակների ընտրութիւնը։ Սակայն Երևանի թեմում, որտեղ աւելի շուտ է ստացվել ընտրութիւններ նշանակելու հրամանը, դեռևս ոչինչ չը կայ, խօսք անգամ չէ լսվում ընտրութիւնների մասին, և ինչպէս անձամբ տեղեկացայ մի քանի գործակալներից՝ հրաման անգամ չեն ստացել նրանք փոխ-թեմակալից։

Թունիկ

—

Ղուլալի (Ղազախի գ.), 22 մայիսի

Այսօր, ժամը մօտաւորապէս 7-ին, անյայտ չարագործների ձեռքով սպանվել են ղուլալեցի Ալէքսան Ալիխեանցը և Խաչատուր Եղիեանցը, իսկ Ծատուր Մակարեանցը և Ղահրաման Մարտիրոսեանը ծանր վիրաւորված են։ Դէպքը պատահել է հետևեալ հանգամանքներում։ Վերոյիշեալները իրանց գիւղի ընտանիքների հետ գնալիս են եղել Ղարաչի կոչված տեղը շուշան քաղելու. յանկարծ չորս կողմից շրջապատում են մօսիններով զինված հինգ թուրքեր և ուզում են կանանց բռնել։ Երիտասարդները չեն թողնում։ Կանայք փախչում են հարայ կանչելով։ Այսօր դիմեցին պրիստաւին, որպէսզի այս խնդրի առիթով արձանագրութիւն կազմէ, և ընթացք տրվի գործին։

Խ. Օրդիեանց

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

16 մայիսի

Երկու տարի առաջ Մօսկվայում ծնունդ առաւ մի շատ համակրելի ընկերութիւն, որի նպատակն էր գիտութիւնը մատչելի դարձնել ժողովրդի բոլոր խաւերին, մանաւանդ բանւոր և արհեստաւոր դասակարգերին։ Խօսքս, ընթերցող, ժողովրդական համալսարաններ հիմնող ընկերութեան մասին է, որի գոյութեան եռամեայ տարեդարձը նոր լրացաւ։ Կարծում եմ, որ ամեն մի ուշիմ ընթերցող հետաքրքրվելիս կը լինի այդ ընկերութեան մանրամասն գործունէութեամբ։ Անցեալ օրը կայացաւ ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովը՝ նախագահութեամբ Մ. Ա. Կաուֆմանի։ Ժողովում կարդացվեց ընկերութեան գործունէութեան հաշիւը, որի հետ արժէ ծանօթացնել հայ ընթերցողին։

Նախ պարզենք, թէ ժողովրդական համալսարանի ամեն մի բաժին քանի հոգի է յաճախել։ Այսպէս՝ գրականական բաժինը յաճախել են մօտ 50,000 հոգի, բնականը՝ մօտ 32,000 հոգի, իրաւաբանականը՝ մօտ 25,000, տնտեսականը՝ 6000 և բժշկականը՝ մօտ 4000 հոգի։ Ընդամենը յաճախել են՝ 111,984 հոգի։

Ինչպէս ընթերցողը տեսնում է, ամենաշատ յաճախորդներ ունեցել են գրականական և բնական բաժինները, իսկ ամենաքիչը տնտեսագիտական և բժշկական բաժինները։

Ամբողջ տարվայ ընթացքում կարդացվել են 340 դասախօսութիւններ 2-ական ժամերով։ Անցեալ տարի դասախօսութիւնների թիւը եղել է 229։

Դասախօսութիւնների թիւը բաժանվում է հետևեալ կերպով։ Բնական բաժնում կարդացվել են 145 դասախ., իրաւաբանականում՝ 74, գրականում՝ 55, բժշկականում՝ 40 և տնտեսագիտականում՝ 25։ Եւ այդ բոլոր բաժանմունքների համար վերցված է եղել 2025 աբօնեմենտներ և 38,123 մուտքի տոմսակներ։

Միջին թւով յաճախել են՝ գրականական բաժինը 802, իրաւաբանականը՝ 325, տնտեսագիտականը՝ 301 և բժշկականը՝ 96 հոգի։ Այսպէս՝ իւրաքանչիւր անգամ ամենաշատը յաճախել են՝ գրականական և ամենաքիչը բժշկական բաժինը։

Այժմ տեսնենք, թէ այդ դասախօսութիւնների կազմակերպումը ի՞նչպիսի գումար է կլանել ընկերութիւնից։

Հաշւից երևում է, որ ընդհանուր ծախք եղել է 17,175 ր. 48 կոպ., իսկ իւրաքանչիւր դասախօսութիւն 50 ր. 51 կոպ. է նստել ընկերութեան վրա։

Համարեա թէ բոլոր բաժիններից վնասներ է ստացել ընկերութիւնը։ Զուտ արդիւնք տուել է գրականական բաժինը՝ 3335 ր. 85 կոպ. և տնտեսագիտականը՝ 365 ր. 4 կոպ., կամ ընդամենը 3700 ր. 89 կոպ.։

Դասախօսութիւններից ստացված ընդհանուր դեֆիցիտը հասնում է 3597 ր. 16 կ.։

Բայց ընկերութեան գործունէութիւնը միայն դրանով չէ կայացել. Մինչև այժմ մեր խօսքը վերաբերում էր պօլիտեխնիկական թանգարանին կից գտնվող աուդիտօրիայում կարդացված դասախօսութիւններին։ Այդ թանգարանը գտնվելով մայրաքաղաքի կենտրոնում, պարզ և բնական է, որ ազգաբնակութեան չքաւոր դասակարգը, մանաւանդ բանւորութիւնը, որ գործարանային ռայոններում է գտնվում, հնարաւորութիւն չէր կարող ունենալ կանոնաւոր յաճախելու այդ դասախօսութիւններին։ Ուրեմն ամեն կերպ հարկաւոր էր միջոցներ ձեռք առնել, որպէսզի մայրաքաղաքի ծայրերում գտնված ազգաբնակութիւնը չը զրկվէր գիտութեան բարձր խօսքից, լուսաւոր դարի գաղափարներից։

Ընկերութիւնն այդ միջոցներն էլ ձեռք առաւ և տարվայ ընթացքում մի շարք դասախօսութիւններ կազմակերպեց մայրաքաղաքի Պրեսնի, Ռօգօժի, Խամօվնիկի և Վվեդենսկի ռայոններում։ Այս մասերում կարդացված դասախօսութիւնները 91 է եղել, 5 կոպէկ վճարով։ Յաճախորդների թիւը 29,907 հոգու է հասել. միջին թւով իւրաքանչիւր դասախօսութեան յաճախել են 316 հոգի։ Այդ դասախօսութիւններից ստացվել է 1150 ր.։ Միջին թւով ամեն մի դասախօսութիւն տուել է 16 ր. 62 կոպ., իսկ ծախք նստել է 29 ր. 16 կոպ.։ Իսկ այս բոլորի հետևանքը նախատեսված դեֆիցիտը, ու կազմում է 783 ր.։

Այժմ ընկերութիւնը ունի մի շատ խղճալի գումար՝ 1277 ր. 97 կոպ.։ Կազմված է նաև տարեկան բալանսը, որ ակտիվ միջոցների հետ միասին կազմում է 14,830 ր. 46 կոպ., որից պասիվ՝ 8940 րուբլի *)։

Ինչպէս ընթերցողը տեսնում է, ժողովրդական համալսարանի գործունէութիւնը այնքան էլ լայն և ընդարձակ չէ եղել մայրաքաղաքում։ Մօտ 1,400,000 հոգի ազգաբնակութիւն ունեցող մայրաքաղաքը մի տարվայ ընթացքում ժողովրդական համալսարանին յաճախորդներ տուել է ընդամենը 111,984+29,907=141,891 հոգի։ Ուրիշ խօսքով ազգաբնակութեան 10$^0/_0$-ն է յաճախել այդ դասախօսութիւններին։

Բայց այդ հանգամանքը երբէք չի յուսահատեցնի ժողովրդական համալսարանների ընկերութեան վարչութեանը, որը ոչինչ համարելով ձախորդ հանգամանքներն ու աննպաստ պայմանները, նոյն եռանդով առաջ կը տանի ժողովրդական այդ սիրելի գործը, ընդարձակելով իր գործունէութեան սահմանները և աւելի բեղմնաւոր ու յարատև դարձնելով իր գործունէութիւնը յօգուտ ժողովրդի լայն խաւերի, մեծ շրջանների և, որ գլխաւորն է, իր բոլոր ջանքերը նա պիտի ուղղած լինի ազէտ և խաւար մասսային գիտութեան կոչելով, լուսոյ սերմեր ցանելով նրանց մէջ...

Վերջացնելով մեր տողերը, ցանկալի է իմանալ, թէ Թիֆլիսի ժողովրդական համալսարանն այս տարի ի՞նչ վիճակի մէջ էր գտնվում։

Ոսկու Զօն

ԺՈՂՈՎՐԴԻ ԴՐՈՒԹԻՒՆԸ ՏԱՇԿԵՆՏՈՒՄ

Թիֆլիս, 21 մայիսի

Մէկը միւսի ետևից նամակներ է, որ ստանում եմ Տաշկենտից, որտեղ ցաւալի կերպով նկարագրում են ժողովրդի այժմեան խղճալի դրութիւնը ընդհանրապէս և մանաւանդ վերջերս դժբաղդացած մի ընտանիքի դրութիւնը մասնաւորապէս. ցաւը նրանում չէ, որ թշուառութիւն կայ Տաշկենտում. թշուառութիւն ամեն տեղ կայ. բայց ցաւը նրանում է, որ Տաշկենտում ունեւոր մասը խուլ և համր է ձևանում աղաղակող կարիքի առաջ։ Փորները կուշտ և տզած հարուստների համար ի՞նչ փոյթ որ կան մարդիկ, որոնք բառի բուն նշանակութեամբ հաց չունեն ուտելու, այլ հացի փոխարէն գործ են ածում կարտօֆել՝ իրանց չարքաշ գոյութիւնը պահպանելու համար։ Միայն մի երիտասարդ, որը այժմ ներկայացնում է որպէս մի օազիս՝ անապատ դարձած Տաշկենտի հայկական կեանքում, ցոյց է տալիս մարդասիրութեան և գործունէութեան նշաններ։ Նա թողած իր բան ու գործը, անդրդուելի կերպով աշխատում է սովամահութեան դուռը կանգնած այդ դժբաղդացած ընտանիքի համար՝ պայծառ դուրս բերելով Տաշկենտի անտարբեր հայերի երեսը. անճարացած կինը ուզեցել է խնդիրք տալ քաղաքագլխին՝ իրան և իր երեխաներին ազատելու սովամահութիւնից և հայթայթելու բժշկական միջոցներ հիւանդ երեխաներին, բայց, այդ «տխուրով» երիտասարդը այդ բանը համարել է Տաշկենտի հայերի պատւին ընդդէմ, յորդորել է թշուառացած ընտանիքին մի փոքր էլ սպասել, մինչև որ կաջողվի մի ճար անել, իսկ մինչև ճար անելը, ստիպված է եղել կարգադրելու, որ իր հաշւից—չը նայած որ մեծ ռոճիկ չէ ստանում—ճաշարանից ամեն օր ճաշ տանեն այդ այլքացած ընտանիքի համար։ Ինչո՞վ բացատրել այս հակասութիւնը։—Տաշկենտի հայերը տալիս են աւելի քան 1000 րուբլի Բագուի հայոց կուլտուրական միութեան կողմից այնտեղ գնացած ներկայացուցիչներին, բայց խուլ և համր են ձևանում յետին ծայր թշուառութեան հասած մի բարոյական ընտանիքի աղերսանքների առաջ... Թշուառ ընտանիքին օգնելով՝ դրսի մարդկանցից ոչ ոք չէր իմանայ, բայց Բ. հ. կ. միութեանը 1000 ր. տալով՝ հաշւետւութեան ժամանակ իրանց անունները տպված կը տեսնէին լրագիրներում։

Այս դէպքերը գալիս են մի աւելորդ անգամ ևս ապացուցելու, թէ որքան անհրաժեշտ է բարեգործական ընկերութիւն ունենալը Տաշկենտում։ Թէև «Մշակում» և «Խարազանում» տպված են յօդուածներ Տաշկենտում բարեգործական ընկերութիւն հիմնելու մասին, բայց, ի նկատի ունենալով այն հանգամանքները, որ ա) Տաշկենտում չը կայ մի այնպիսին, որ կարողանար նախաձեռնող հանդիսանալ այդպիսի մի լուրջ գործի, և բ) որ Տաշկենտում այդ հարցի վերաբերմամբ կայ կարծիքների զանազանութիւն, և ի նկատի ունենալով որ միանգամայն անհրաժեշտ է բարեգործական ընկերութիւն ունենալը Տաշկենտում, մենք բացարձակապէս յայտնում ենք, որ մեր յոյսը այդ գործի վերաբերմամբ՝ է Սամարղանդի քահանայի վրա։ Նա ստացած լինելով համալսարանական կրթութիւն, ձեռք բերած լինելով որոշ չափով դիրք և ազդեցութիւն, եղած լինելով Տաշկենտի հայերի նախկին ծխատէր քահանան, լինելով մէկը հաւագիւտ գաղափարական քահանաներից, կարող է նախաձեռնող հանդիսանալ մի այդպիսի գործի, որը կատարելու համար մենք խնդրում ենք մամուլի միջոցով, յուսալով որ յարգելի գաղափարականը, կարիքի մասին տեղեկութիւնը լսելուն պէս՝ կը շտապի կատարելու իր բարոյական պարտականութիւնը։

Արտ. Օհանջանեան

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

◆ Կանանց բարձր կուրսերը մտնելու համար խնդիրների ընդունելութիւնը բացված է արդէն և կը տևի մինչև օգոստոսի 1-ը։ Ընդունելութեան պայմանները այս տարի աւելի ծանր են քան թէ անցեալում։ Խնդիրքի հետ միասին միաժամանակ պէտք է ներկայացնել նաև հետևեալ իսկական վկայաթղթերը, ծննդական վկայական. 7-րդ դասարանի ատեստատ և 8-րդ դասարանի համար առանձին վկայական կամ վկայաթուղթ (удостовѣреніе) լրացուցիչ քննութիւն բռնելու մասին, քաղաքական բարեյուսութեան վկայական, եթէ որ խնդրատուն միջնակարգ դպրոցը աւարտելու տարին չէ մտնում։ Եթէ այդ թղթերից մէկն ու մէկը չը լինի, այն ժամանակ խնդիրքը բոլորովին քննութեան չի առնվի։ Ընդունելութիւնը տեղի կունենայ ատեստատների մրցութեամբ, կօնկուրսով։ («Р.»)

◆ Նովօրոսսիյսկի համալսարանի ուսանողների ակադեմիական կազմակերպութեան նախաձեռնութեամբ մօտ ժամանակներս Օդեսսայում հրաւիրվում է բոլոր համալսարանների ակադեմիստների ներկայացուցիչների առաջին համագումարը ակադեմիական կեանքը կանօնաւորելու նպատակով, նոյնպէս և միացնելու նրանց կազմակերպութիւնները համերաշխ գործունէութեան համար։ Համագումարը ի միջի այլոց կը զբաղվէ համալսարանական ուսանող կանանց և ազատ ունկնդրուհիների հարցով։ Իւրաքանչիւր կազմակերպութիւնից կարող են մասնակցել այդ համագումարին ոչ աւելի քան հինգ հոգի։ («Р. Сл.»)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

◆ Պետական Դումայում գիւղացի պատգամաւորների նախաձեռնութեամբ յարուցված է հետևեալ առաջարկը. «Ընդունելով որ Պետական Դումայի գործունէութեան մասին լայն չափով պէտք է տեղեկութիւն ստանան Ռուսաստանի կայսրութեան բոլոր քաղաքացիները, որ դրա իրագործման համար բազմաթիւ խոչընդոտներ կան և որ դրանց շնորհիւ ազգաբնակութիւնը անտեղեակ է մնում Դումայի գործունէութեան և յաճախ ստիպված է լինում բաւականանալ այլ և այլ լուրերով,—մենք, ի ներքոյ ստորագրողներս, խնդրում ենք Պետական Դումայի և Պետական Խորհրդի ստենօգրաֆիական բոլոր արձանագրութիւնները տպագրել տալ պետական հաշւով և ձրի ուղարկել բոլոր վոլոստնոյ վարչութիւններին, զեմստվային մարմիններին, նոյնպէս և ստանիցաների վարչութիւններին»։ Այդ առաջարկի տակ ստորագրել են Պետական Դումայի 79 անդամները, որոնցից 40-ը գիւղացիներ են։ («Р. Ут.»)

◆ Արբեցութեան դէմ կռւելու միջոցներ մշակելու համար կազմված մասնաժողովը, ցանկանալով օղու գործածութիւնը կրճատել, մտադիր է, ի միջի այլոց, փոխել շիշերի վրա կպցրած եարլիկները. երկգլխանի արծիւը պէտք է վերացվի և նրա փոխարէն դրվի հետևեալ նախազգուշացնող մակագրութիւնը. «Ո՛վ մարդ, թէև դու գնել ես այս գինին, բայց իմացի՛ր, որ դու թոյն ես խմում, որը քեզ կը խորտակի։ Կանգ առ, քանի դեռ ուշ չէ. երկրորդ շիշը այլ ևս չառնես։ Ֆինանսների մինիստր»։ («Н. В.»)

ԳՐ. ՌՕԲԱԿԻՁԷԻ ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Մայիսի 21-ին, երեկոյեան ժամը 8$^1/_2$-ին, արտիստական ընկերութեան դահլիճում Գր. Ռօբակիձէն հրապարակական դասախօսութիւն կարդաց «սեռը և սէրը» (полъ и любовь) վերնագրով։ Ներկայ եղող հասարակութիւնը գլխաւորապէս բաղկացած էր երկսեռ երիտասարդութիւնից։ Դասախօսը մատնանշելով սեռային հարցը իբրև ժամանակակից ամենահրատապ խնդիրներից մէկը՝ աշխատեց գաղափար տալ մարդու սեռի վերաբերմամբ մինչև այժմ գոյութիւն ունեցող կարծիքների մասին, սկսած Պլատոնից, որի ստեղծած միֆը ազդել է Կանտի, Սօլովէվի, Շօպենհաուէրի, Միխայլօվսկու և այլոց հայեացքների վրա։ Այնուհետև կանգ առնելով Ռօզանովի և Մէչնիկովի թէօրիաների վրա, ցոյց տուեց նրանց անհիմն լինելը։

Դասախօսութեան երկրորդ մասը նուիրված էր գլխաւորապէս մարդու էութեան, որը իր մէջ պարունակում է երկու հիմք—արական և իգական. արականի մէջ նիւթականը որպէս գերակշռող հոգևորից, իսկ կնոջ մէջ, ընդհակառակը, նիւթականը։ Կեանքի, գրականութեան և գեղարուեստի մէջ արականը մտցնելու է իդէալական ստեղծագործութիւն, իսկ իգականը—կինը՝ ընկալօ-պասսիւ. այդպիսով տղամարդը ստեղծող է, իսկ կինը՝ «հետևող»։ Նոյն երևոյթը նկատում է դասախօսը սիրոյ մէջ. տղամարդը սիրում է բանաստեղծաբար, սիմվօլիքաբար, իսկ կինը՝ էմպիրիքաբար։ Եւ այդ ուղղութեամբ դասախօսը յանգեց այն եզրակացութեան, որ սեռական սիրոյ մէջ թագնված է բողոք ծնունդի դէմ և անգիտակցական ձգտում անհատի վերահաստատման համար։ Ցոյց տուեց մի քանի նորագոյն յայտնի հեղինակների հայեացքները սիրոյ մասին։ Վերջում նա եզրափակեց իր ասելիքը։

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Մայիսի 23-ին, երեկոյեան, Գրիշինի դրամատիքական արտիստների խումբը Թիֆլիսի արքունական թատրոնում, դերա-

---

*) Համաձայն մեր խոստման՝ տեղ ենք տալիս այս յօդուածին և միևնոյն ժամանակ հարկ ենք համարում ասել, որ մինչև այսօր ոչ ոք լրջօրէն չէ դրել Սուրէնեանցի թեկնածութիւնը։ Ճիշտ է, կան աշխատողներ նրա համար, նոյնիսկ շշուկներ են պտտում, որ մի որոշ կուսակցութիւն խուլրդային կերպով պէտք է աշխատէ նրա թեկնածութեան համար, որ մի վարդապետ նոյնիսկ Բագւում պրօպագանդա է արել նրա համար, բայց դժուար թէ Սուրէնեան կարողանայ մտցվել նոյնիսկ քառանուն ցանկի մէջ. ուստի այդ կողմից որևէ վախ ունենալ անտեղի է։ Խմբ.

*) Այս թւերը մենք քաղել ենք մայրաքաղաքի թերթերից։ Ո.-Զ.

սանուհի Ե. Ն. Լիլինայի բենեֆիսին, ներկայացուեց «Թագուհի Թամարա» պիէսան (հեղ. Սումբաթօվի, 5 արարուածով), որ առաջին անգամ է բեմ դրվում Թիֆլիսում։

Պիէսայի նիւթը առնված է վրացական պատմութիւնից։ Իմերեթիայի այրի Թամարա թագուհին—չափազանց փառասէր, հաստատակամ, բայց և չարասիրտ ու կրքոտ մի տիպ—օգտվում է իր փեսայ՝ Գէորգ Թագաւորի թոյլ ու փոփոխամիտ բնաւորութիւնից և, իր արտակարգ գեղեցկութեամբ խելքահան անելով նրան, փոխարինում է իր աղջկան՝ Թագուհի Նինային, ուղարկելով վերջինիս մենաստան։

Իր ծրագիրները իրագործելու համար նա աշխատում է ոչնչացնել իրան խոչընդոտ հանդիսացողներին. գոհաբերում է պալատական Գօգիային, որի հետ առաջ նա մտերիմ կապեր ունէր, իր հմայքով, խլում է վերջինիս աղջկայ Գայիանէի՝ որ Նինայի ընկերուհին էր՝ նշանածին, ժողովրդական երգիչ Րօստոմին, և խելագարութեան է հասցնում Գայիանէին։ Վերջինս վրէժխնդիր լինելու համար դրդում է իր սիրածին սպանել Թամարային, բայց նա դաւաճանում է նրան։ Այդ ինտրիգների արդիւնքը լինում է եղբայրական կռիւներ, որը ժողովրդին գրգռում է Թամարայի դէմ և նա գալիս պահանջում է Թագաւորից իր ձեռքը առնել կառավարութեան ղեկը և հեռացնել Թամարային։ Ահա այդ ժամանակ Թամարան, երբ մանաւանդ իմանում է, որ Գայիանէն ևս իր հարազատ աղջիկն է, թոյն է խմում ու մեռնում։ Դրանով էլ վերջանում է պիէսը։

Դժբաղդ Նինայի անձնազոհ տիպը գեղեցիկ կերպով ներկայացրեց բենեֆիցիանտուհին։ Նրա յայտնվելը բեմի վրա բուռն ծափահարութիւններով ընդունվեց հասարակութեան կողմից. ծաղկէփունջ և ծաղիկներ կողով նուէր ստացաւ։

Աքանչելի էր Թամարայի դերում տ. Մոժանսկայան, որը նոյնպէս ստացաւ մի ծաղկէփունջ։

Բնորոշ կերպով պատկերացրեց Գէորգի թագաւորին Միկուլինը։ Գայիանէի դերում լաւ էր տ. Սապօրինը թէ առաջին գործողութեան մէջ և թէ մանաւանդ 4-դում, երբ ուզում էր վրէժխնդիր լինել Թամարայից։ Գայիանէի ազնիւ, բայց և կրակոտ տիպը կենդանութիւն էր ստանում նրա խաղի մէջ։ Միւսները պահպանում էին անսամբլը։

Մի կողմ թողնելով պիէսայի թերութիւնները կամ առաւելութիւնները, խաղի նկատմամբ պէտք է խոստովանել, որ բաւականին աջող անցաւ։

Լ. Դ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Այսօր, Թիֆլիսի բօրսային դահլիճում, ցերեկվայ ժամը 11-ին նշանակված է նախնական խորհրդակցութիւն կաթողիկոսական հարցի շուրջը։ Ժողովին կարող են ներկայ լինել միայն կաթողիկոսական պատուիրակները, պատգամաւորները և յատուկ հրաւիրված անձեր։

◆ Թիֆլիսի ժամ. գեներալ-նահանգապետի կարգադրութեամբ Մետեխի բանտում բանտարկված Իլլարիոն Լէյկվեշվիլին, իբրև վտանգաւոր անձն հասարակական հանգստութեան և պետական կարգ ու կանոնի համար, ոստիկանութեան հսկողութեան տակ աքսորվում է Օրէնբուրգի նահանգը զինուորական դրութեան ամբողջ ժամանակ։

◆ Թիֆլիսի ժամ. գեն.-նահանգապետի կարգադրութեամբ Մետեխի բանտում բանտարկված Գէորգի Արագաձէին, իբրև վտանգաւոր անձն, արգելվում է ապրել Թիֆլիսի գեն.-նահանգապետութեան սահմաններում։

◆ Ուրբաթ, մայիսի 23-ին, Թիֆլիսի գիւղատնտեսական ընկերութեան շինութեան մէջ կայացաւ ընկերութեան խորհրդի նիստը, որին մասնակցում էին նաև բնութիւնը սիրող և պտղաբուծութեան ընկերութիւնները։ Ա. Քալանթար կարդաց իր զեկուցագիրը կլիմայախօսական հարցի մասին։ Զեկուցագիրը առաջ բերեց հետաքրքրական վիճաբանութիւններ։ Վերջում ընտրվեց մի յանձնախումբ Ա. Քալանթարի յարուցած խնդիրները ուսումնասիրելու համար։ Ապա, միևնոյն գիւղատնտեսական նիստում, անդամ Տիմօֆէևը կարդաց իր զեկուցագիրը՝ գաւառներում գիւղատնտեսական ճիւղեր հաստատելու մասին։ Ժողովը համակրանքով ընդունեց այդ միտքը։ Ի վերջոյ հարց բարձրացաւ սեփական օրգան հաստատելու մասին։ Որոշվեց հրատարակել «Кавказс. Хозяйство» անունով երկշաբաթաթերթ, միայն նախնական բոլոր միջոցները գտնելուց յետոյ։

◆ Թիֆլիսի քաղաքային դումայի ձայնաւորներ Ս. Միրզօյեան և Ելիավա քաղաքային վարչութեան ներկայացրել են իրանց կազմած և տնտեսական մասնաժողովի քննած մանրամասն զեկուցագիրը քաղաքային ընդարձակ հացթուխարան բանալու մասին՝ հացի գները կարգաւորելու և ազգաբնակութեան սուր կարիքին բաւարարութիւն տալու համար։ Զեկուցագրով առաջարկվում է այդ հացարանը կապալով տալ մասնաւոր անձի, որով հացարանում թխվելու է օրական 300—1000 պուդ հաց։

◆ Անդրկովկասում նոր ճանապարհներ կառուցանելու մասնաժողովի վերջին նիստում քննութեան առնվեցին Քութայիսի և Թիֆլիսի նահանգներում ճանապարհներ անցկացնելու նախագծերը, որ կազմել են տեղական նահանգական ատեանները։

◆ Թիֆլիսի նահանգապետը քաղ. կանոնադրութեան 148-րդ յօդուածի համաձայն Սղնախի քաղաքային աւագ Ենիկոլոփեանին պատասխանատւութեան է ենթարկում ծառայական զեղծումներ կատարելու համար։

◆ Այսօր, մայիսի 25-ին, Զուբալովի ժողովրդական տանը, առ. ժամը 11-ին, իշխ. Ակակի Ծերեթելին վրացերէն լեզուով կը դասախօսէ «Ժամանակակից գաղափարները, որ արտայայտել է մեծ բանաստեղծ Շօթա Րուստավէլին 12-րդ դարում»։ Դասախօսութիւնից յետոյ կը կայանայ համերգ, մասնակցութեամբ տ. Նաւասարդեանի, օր. Քալանթարի, Միխէևի, պ. Պիստրօի, Վերբովի և Բրօջիի։

◆ Լուրերին նայած, Թիֆլիսի 1-ին արական գիմնազիայի 1-ին դասարանի 2 բաժանմունքները մտադրութիւն կայ փակել։

◆ Թիֆլիսի նահանգապետը Փոխարքայի հաստատութեանն է ներկայացրել Թիֆլիսի քաղաքային դումայի 1907 թ. հոկտ. 23-ի որոշումը այն հողաբաժինների մասին, որ գրաւած ունի երկաթուղային վարչութիւնը և որոնց տարածութիւնն է 2460, 60 քառ. սաժէն, 24,000 րուբլի արժողութեամբ։

◆ Թիֆլիսի քաղաքագլուխը դիմել է Թիֆլիսի նահանգի պետական կալուածքների կառավարչին, խնդրելով հաղորդել՝ ինչպիսի ազատ արքունական հողեր կան քաղաքի շրջակայքում և ինչ պայմաններով կարելի է նրանց քաղաքին յանձնել։ Քաղաքագլուխը այս հարցումը տուել է նկատի առնելով այն հանգամանքը, որ երկաթուղիների և քաղաքի հեռաւոր թաղերի ազգաբնակութեան բնակութեան համար հողեր յատկացնելու պատճառով քաղաքը աստիճանաբար զրկվում է ազատ հողաբաժիններից։

◆ Թիֆլիսի էլեքտրաքարշի ընկերութիւնը վերին աստիճանի ճնշվելով խոշոր տուգանքներից և գրաւականներից դիմել է քաղաքային վարչութեանը՝ խնդրելով ընկերութեան վրա նշանակած տուգանքները չը վերցնել այն գումարներից, որոնք պահվում են քաղաքի գանձարանում իբրև գրաւական ընկերութեան կողմից, մինչև որ դատարանով կը պարզվի թէ ո՞ր աստիճան արդարացի են այդ տուգանքները։ Գրաւական գումարներից այդ տուգանքները վերցնելով, էլեքտրաքարշի ընկերութիւնը չէ կարողանում մինչև անգամ հերթական ծախքերը կատարել։

◆ Թիֆլիսի էլեքտրաքարշի ընկերութիւնը յայտնել է քաղաքային վարչութեան, որ նա այլևս տարեկան և վճարովի տոմսեր չի տայ այն դէպքերում, երբ այդ տոմսերը տէրերը կը կորցնեն, որովհետև կօնտրօլեօրները շատ դժուարութեամբ են հետևում նրանց, որոնք գտնում են այդ տոմսերը և օգտվում նրանցից։

◆ Վօղը վրայ ազնուականութեան հողային բանկի շինութեան մէջ նշանակված է բանկի լիազօրների ընդհանուր ժողովը։

◆ Ստացանք Էջմիածնի գիւղատնտեսական բաժնի տեղեկագիրը, որը կազմել է գիւղատնտես Կ. Մելիք-Շահնազարեան։

◆ Պրօֆեսոր Պատոնը արդէն ուղարկել է քաղաքային վարչութեան Մուխրանեան կամուրջի յատակագիծը։

◆ Մայիսի 27-ին Սանահինից տեղս են գալու տեղական հայ դպրոցի սաները և սանուհիները Թիֆլիսը դիտելու համար։

◆ Ստացանք հետևեալ նոր հրատարակութիւնները. 1) «Դպրոցական չարիքներ և կեղծուած փաստաթղթեր» (Շուշու թեմական դպրոցի 1906—1907 թ. ուսումն. տար. խառնակութիւնների շուրջը), գինն է 20 կ., 2) Հոմերոսի «Հեկտորի և Աքիլլեսի կռիւը», թարգմանութիւն Պետրոսեանի, գինն է 5 կ.։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Մայիսի 22-ին ձերբակալել և բանտարկել են լրագրավաճառների պրօֆեսիօնալ ընկերութեան վարչութեան անդամներ՝ Մնացական Նազարովին, Նախիջևանցի Ստեփան Յարութիւնովին, Աւետիս Կալնաչեանին և Յակոբ-օղլուն, որոնք վարչութեան անունից «Голосъ Кавказа» խմբագրութեանը ուրիշ պահանջներ են ուղղել ընդունել պայմանները, հակառակ դէպքում սպառնում էին չը հպատակվողներին։ Ընկերութիւնը փակված է, կնիքը և փաստաթղթերը խլված են։

◆ Մայիսի 23-ին ձերբակալել են ադմինիստրատիվ կերպով աքսորված Լուկա Ջինջարաձէին, որը ինքնակամ վերադարձել է աքսորավայրից։

◆ Մայիսի 23-ին Կսենիևսկայա փողոցում բնակվող Իսայեվան յայտնել է ոստիկանութեան, որ իր տան դռնապան Դեմիդօվը մայիսի 21-ին, երեկոյեան ժամը 9—10 ժամանակամիջոցում, դիրքի վրա կանգնած յանկարծ անյայտացել է։ Կասկածով ձերբակալված է դռնապան Մարտիրոս Ասատուրեանը, որի հետ Դեմիդօվը կռուած է եղել։ Մայիսի 23-ին Դեմիդօվի կինը մի անստորագիր նամակ է ստացել քաղաքային պօստով հետևեալ բովանդակութեամբ. «Եթէ կենդանի կը լինի, 6 ամսից յետոյ կը տեսնենք թէ ինչպէս կը դիմանայ»։ Քննութիւն է կատարվում։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ Ի նկատի առնելով այն հանգամանքը, որ հայոց լեզուի դասաւանդութիւնը ներկայ տարվանից արդէն մտցված է քաղաքային Միքայէլեան դպրոցում, մինչդեռ դպրոցը դասական պիտոյքներ ու ընթերցանութեան գրքեր չունի, դպրոցի մանկավարժական խորհուրդը ընտրել է յատուկ մասնաժողով հայ ուսուցիչներից՝ անհրաժեշտ գրքերի ցուցակը կազմելու համար։ Այդ մասնաժողովը մշակել է ցուցակը, և մայիսի 21-ին դպրոցի տեսուչը դիմել է քաղաքային վարչութեան ու խնդրել յատկացնել նրանց գնելու համար հարկաւոր գումարը։

◆ Տէլէֆօննայա փողոցի վրա № 40 տան մէջ բնակվող Շուշի քաղաքի բնակիչ Բաղիրեանը յայտնել է ոստիկանութեանը, որ իր 16 տարեկան որդին, Իվան Բաղիրեանը, անցեալ կիրակի, մայիսի 19-ին, դուրս է եկել տնից և այլևս չէ վերադարձել։ Նրա ծնողների և ազգականների գործ դրած ջանքերը տղային գտնելու համար բոլորովին անհետևանք են անցել։

◆ Մայիսի 20-ին Միրզաբէգեանցների ծխախոտի գործարանի ադմինիստրացիան յայտարարել է բանւորներին, որ, կատարելագործված մեքենաներ ներմուծումը ի նկատի առնելով, պէտք է արձակվեն բանւորներից, որոնց թիւը այժմ 400 է, 180 հոգի։ Մնացեալները իրանց վճարը կը ստանան հատով հաշւելով, որպէսզի դրանով կարելի լինի արդիւնաբերութիւնը զօրեղացնել։

Արձակվող բանւորներին կը տրվի իբրև վարձատրութիւն իւրաքանչիւրին իր ամսական ռոճիկի կէսը ամեն մի ծառայած տարվայ համար (բնակարանի վարձը հաշւի չէ առնվում)։ Բանւորներին ուղղած իր դիմումի մէջ գործարանի վարչութիւնը մատնանշում է, որ նա ստիպված պիտի լինի կամ մտցնել արդիւնագործութեան մէջ այդ փոփոխութիւններն ու կատարելագործութիւնները և կամ վերջնականապէս խորտակել ֆիրման, որովհետև փողի և իրերի պակասութեան պատճառով մի քանի ժամանակից յետոյ ստիպված պիտի լինի գործարանը փակել։ Այդ հանգամանքը ի նկատի առնելով, վարչութիւնը առաջարկում է բանւորներին լուրջ վերաբերվել այդ խնդրին։ Ինչպէս ասում են, բանւորները համաձայնվելով արդիւնաբերութիւնը բարելաւելու անհրաժեշտութեան հետ, միևնոյն ժամանակ գտնում են, որ հարկաւոր է արձակվողներին աւելի բարձր վարձատրութիւն տալ, քանի որ անյուսալի է նրանց դրութիւնը։ («Б.», «Кс.»)

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Պարսկական նոր դեսպան Իսահակ Խան Մուֆա Խան էդ-Դօվլէի Պետերբուրգ գալը, ի նկատի առնելով իրերի դրութիւնը Պարսկաստանում, ինչպէս ասում են, տեղի կունենայ ոչ վաղ յունիսից։ («Русь»)

◆ Անգլիական «Daily News» լրագիրը և նրա հետ միասին գերմանական մի քանի ուրիշ օրգաններ հաղորդել էին, որ Էդուարդ թագաւորի այցելութիւնից օգուտ կը քաղեն ռուսաց նոր փոխառութիւն աջողեցնելու համար։ Նոյն աղբիւրների համաձայն, անգլօ-ռուսական համաձայնութիւնը մշակելու միջոցին ևս փոխառութեան դիտաւորութիւնը մոռացութեան չէ տրված։ Այդ առիթով «Н. В.» լրագրի աշխատակիցը դիմել է մեր ֆինանսական մինիստրութեան ներկայացուցիչներից մէկին, որը ամենակաթեգօրիկ կերպով յայտնել է, որ անգլիական և գերմանական լրագիրների տարածած այդ լուրերը անհիմն են։ Ներկայումս ոչ մի դիտաւորութիւն չը կայ արտաքին փոխառութիւն անելու։

◆ Ճանապարհների հաղորդակցութեան մինիստր Շաուֆուսը հնարաւոր է գտել հարաւային երկաթուղիների արտակարգ պահպանութիւնը վերացնել։ («П. К.»)

◆ Ռուս «Ժուրնալիստ» Նայդենբերգի սպանութիւնը Ցիւրիխում կատարվել է քաղաքական հողի վրա։ Նայդենբերգը լրտես է եղել և սպանված է սօցիալիստ-յեղափոխականների կուսակցութեան դատավճռի համաձայն։ («Русь»)

◆ Պետերբուրգից էտապով Վարշավա է ուղարկված համալսարանի նախկին ուսանող Մագուրսկին, որը Վարշավայի առևտրական բանկի կեղծ չեկով ստացել է Բեռլինի Բլէյխրեդերի բանկային տան գրասենեակից 50,000 մարկ։ («Рус. Сл.»)

◆ Լօձի գործարանատէրերից շատերը իջեցրել են բանւորների աշխատանքի վարձը և աւելացրել աշխատանքի օրը։ Բանւորները մեծաւ մասամբ համաձայնվում են աշխատանքի նոր պայմաններին։ («Русь»)

◆ Միջտեսչական մասնաժողովի խորհրդակցութիւնը մուսուլման ուխտաւորների Մեքքա գնալու առիթով նշանակված է մայիսի 26-ին։ Խորհրդակցութեանը մասնակցելու համար հրաւիրված է Բայեվը, որ առաջարկում է կազմակերպել յատուկ ուխտաւորների գնացքներ։ («Кс.»)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

(Մայիսի 20-ի նիստի շարունակութիւնը *)

Ռ. սինօդի օբէր-պրօկուրօրը գտնում է, որ Դումայի առաջ դրված է այնպիսի պարզ և հասարակ մի հարց, որ ոչ մի պաշտպանութեան կարիք չունի։ Ինչպէս ծանր է շինական հոգևորականութեան համար իր ամբողջ բարեկեցութիւնը, իր ընտանիքի ամբողջ բաղդը հիմնել ծխականների կամաւոր տուրքերի վրա։ Քիչ չեն այն մեղադրանքները, որ թափվում են ռուսաց հոգևորականութեան գլխին՝ թէ նա շահասէր է, դրամաշորթ է. բայց դրեք որևէ ուրիշ դասակարգի ռուսաց հոգևորականութեան կեանքի պայմանների մէջ, հաւատացէք, կշտամբանքների դէմ բողոքներին վերջ չի լինի։

Ռուսաց սինօդը, իբրև եկեղեցական բարձր կառավարութիւն, միշտ, ի հարկէ, միջոցներ է ձեռք առել անիրաւ տուրքերի դէմ. Նա խիստ պատժել և պատժում է դրամաշորթութեան առանձին դէպքերը, սակայն ծխակատարութեան վճարը պակասեցնել հնարաւոր է միայն այն դէպքում, երբ հոգևորականութիւնը կարիք չունենայ, այսինքն՝ երբ նա ապահովված լինի ուրիշ եղանակով։ Այդ ուղղութեամբ այնպէս քիչ բան է արված, որ շինական քահանան մինչև օրս կարիքից դրդված շարունակում է մուրալ։ Բոլոր ուղղափառ պետութիւնների մէջ հողային հարկը ընդունվում է իբրև հոգևորականութիւնը ապահովելու հիմունք. ամենուրեք թոյլատրվում է տուրք առնել ծխակատարութեան համար, ամենուրեք պետութիւնը օժանդակում է հոգևորականութեան։

Չը շօշափելով գործի պատմութիւնը, որ մանրամասնօրէն առաջ է բերել զեկուցագիրը, օբէր-պրօկուրօրը մատնանշում է, որ հոգևորականութեան ռոճիկի աստիճանաբար աւելացումը հասաւ 12 միլիօն րուբլու։ Ըստ երևոյթին, գումարը մեծ է, բայց իսկապէս շատ քիչ է. 41,000 եկեղեցական սպասաւորներից միայն 26,000-ն է ռոճիկ ստանում, 13,000-ը ոչինչ չէ ստանում։ Քահանան տարեկան ստանում է ընդամենը 300 րուբլի, սարկաւագը՝ 150 ր. և այլն։ Մինիստրութեան օրինագիծը ձգտում է քահանայի տարեկան ռոճիկը հասցնել գոնէ 600 րուբլու։

Ապա խօսում են Միտրօֆան եպիսկոպոսը, Գիպեցկի քահանան, հ. Կօմարեցկին, Լվօվ 2-րդը, հ. Ստանիսլավսկին։

Կրոպօտովը կարծում է, որ գիւղացիները աւելի վատթար են ապրում, քան հոգևորականութիւնը։ Հարկաւոր էր նախ մտածել գիւղացիների մասին։ Հոգևորականութիւնը իր ռոճիկը ստանալով պետական գանձարանից՝ կարող է եկամուտ ունենալ և ծիսակատարութիւններից։ Եթէ միջոցներ են հարկաւոր հոգևորականութեան ռոճիկները աւելացնելու, չէ՞ կարելի, արդեօք, այդ միջոցները վերցնել եպիսկոպոսների և առաջնորդների եկամուտներից, որոնք տարին մի քանի հազար րուբլի են ստանում (ծափահարութիւն ձախակողմում)։ Ոչ թէ գիւղացիների շլնքին պէտք է նորանոր հարկեր դնել, այլ աշխարհից կտրված վանականներից պէտք է առնել, որոնք տակաւին միլիարդներից չեն կտրվել…

Վերջում հռետորը կարդում է գիւղացիների բանաձևը, որով օրինագիծը մերժվում է։

Մի քանի ճառախօսներից յետոյ, օրինագիծը ամբողջովին ընդունվում է։

Ժամը 6 և 7 րոպէին յայտարարվում է դադար։

Նիստը վերսկսվում է երեկ. ժամը 9 և 22 րոպէին։ Նախագահում է Խօմեակովը։

Հերթում դրված է աջակողմեանների հարցապնդումը Օբուխովի մետաղաձուլարանի հրդեհի մասին։ Մինիստրների օթեակում է ծովային մինիստրի օգնական Բօստրեմը։ Հարցապնդումը հերթական է։

Առաջինը հանդէս է գալիս Պուրիշկևիչը և խիստ կերպով քննադատում է ծովային մինիստրութիւնը։ Նա այդ գործունէութեան մէջ գտնում է բազմաթիւ պակասութիւններ։ Ուժեղ կերպով յարձակվում է այն անգործունէութեան վրա, որ մինիստրութիւնը ցոյց է տալիս Օբուխովի գործարանում։ Այնուհետև կէտ առ կէտ բացատրութիւններ է տալիս ծովային մինիստրի օգնականը։

Քննադատօրէն են խօսում նաև Շէյնկով, Կօլիւբակին, Նօվիցկի 2-րդ, Շուլգին, Զամըսլօվսկի։

Վերջում կրկին խօսում է Պուրիշկևիչը և առաջարկում է հետևեալ բանաձևը, որը և ընդունվում է միաձայն.

«Լսելով ծովային մինիստրի օգնականի բացատրութիւնը Օբուխովի մետաղաձուլարանի հրդեհի առիթով և ընդունելով այն լուրջ անկարգութիւնները, որոնցով պայմանաւորվում են ինչպէս ծագած հրդեհը, այնպէս և նրա հասցրած վնասը, Պետական Դուման անհրաժեշտ է գտնում՝ մի յատուկ կառավարական յանձնաժողով կազմել յիշեալ գործարանի գործունէութիւնը վերաքննելու և արքունական գործարանների յետագայ հրդեհումների առաջն առնելու համար»։ («Հ. Գ.»)

ՄԱՄՈՒԼ

Տեղական ռուս թերթերից մէկը, «Закавказье», վերջերս իր հրատարակչական և խմբագրական կազմի մէջ մտցրել է փոփոխութիւն։ Հրատարակութիւնը պ. Գոտուայից անցել է մի ընկերութեան ձեռք, որ, անշուշտ, աւելի կը նպաստէ թերթի նիւթականին, բայց թէ ո՞ր աստիճան կը փոխվի թերթի ուղղութիւնը նոր հրատարակիչների ձեռքում—այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան։ Ցամենայն դէպս չենք կարող չարձանագրել մի անախորժ, այն էլ կողմնակի յարձակումն հայերի դէմ մի յօդուածի մէջ, որ նուիրված է Կովկասի գերմանացի գաղթականներին (№ 114)։

Յօդուածագիրը խօսելով այն հանրածանօթ իրողութեան մասին, որ մինչ տեղացի տարրը զգացել է շարունակ հողի պակասութիւն, կառավարութիւնը աշխատել է մեծ արտօնութիւններ տալ եկւոր գաղթականներին, գերմանացիներին և ռուսներին, և հողերի մեծ քանակութիւն դնել նրանց տրամադրութեան տակ,—գանգատվում է, որ Վրաստանում վրացիները զրկվել են հողից, իսկ նրանց հողերը տրվել են ուրիշներին, և ահա այդ ուրիշների թւում նա քար է նետում և հայերի վրա՝ ասելով հետևեալը.

«Բոլոր առաւելութիւնները և օգուտները տրվեցին գաղթականներին, գերմանացիներին և **Անատոլիայից ու Էրզրումից փախստականներին** (ընդգծումը մերն, է), և, ընդհակառակը, սուր անհողութեան ամբողջ դառնութիւնը և չարիքը կրում են այն մարդկանց սերունդները, որոնք բազմադարեան կուի արիւնազանդ շաւղով տարան այդ հողի տիրապետութեան իրաւունքը մինչև XX դարի շեմքը»։

Այստեղ ուղղակի ակնարկ է, որ վրացիներին զրկել են հողից և նրանց հողերը տուել նաև հայերին։ Եթէ, արդարև, տեղի ունեցած լինէր այդպիսի մի փաստ, այսինքն վրացիներին զրկած լինէին յօգուտ հայերի, մենք ևս այդպիսի մի ակտ կը յայտարարէինք անարդար. երբեք մենք չէինք ցանկանայ, որ վրացի խեղճ գիւղացին, աշխատաւոր հողագործը զրկվի իր հողից և այդ հողը ստանայ հայը, Էրզրումից և Մուշից եկած հայը։ Բայց ցոյց տուէք մեզ՝ ո՞րտեղ են հայերին հող տուել, ո՞րտեղ են հողը խլել տեղացիներից և տուել հայերին։ Սև ծովի ափին մօտ 40 տարուց ի վեր հաստատված հայ գաղթականները մինչև այսօր չեն կարողացել հող ձեռք բերել իբրև սեփականութիւն, այլ հողը մշակում են վարձով։ Մեր վրացի եղբայրները չը պէտք է մոռանան, որ հայ հողագործ տարրն ևս Անդրկովկասում նոյն պայմանների մէջն է ապրում, ինչպէս վրացին, որ նա զգում է հողի սաստիկ պակասութիւն։ Ասել թէ հայ գաղթականները արտօնութիւններ են վայելում,—դա նշանակում է կրկնել այն անարդար ամբաստանութիւնը, որ ռուս պատրիօտները նորերս բարդեցին Կովկասի Փոխարքայի վրա, թէ նրա օրով հողերը տրվել են հայ գաղթականներին, իսկ ռուսներին զրկել են հողից։ Եւ, սակայն, մենք տեսանք, որ Փոխարքայի դիւանատունը պաշտօնական թւանշաններով և փաստերով հերքեց այդ մեղադրանքը, ցոյց տալով որ հայ գաղթականներին ոչ մի տեղ և ոչ մի հող չէ տրված։

Ժամանակ է, որ վրացի եղբայրները հասկանան, թէ Վրաստանի ազատագրութիւնը չը պէտք է հիմնել տեղական, ուրիշ և հայ տարրի ճնշման վրա։ Հայերը Վրաստանի շատ տեղերում ոչ եկւոր են, ոչ գաղթական։

*

«Վտակը», որ ստախօսութիւնը և փաստերի անպատկառ խեղաթիւրումը փէշակ է դարձրել իր համար, իր երեկվայ համարում նորից «չինօվնիկութեան» խնդիր է յարուցանում Ալ. Քալանթարի մասին և յեղաշրջում Հ. Առաքելեանի ասած խօսքերը։ Մեզ հաստատապէս յայտնի է, որ Հ. Առաքելեան յայտնել է, թէ Ալ. Քալանթարը ստորագրել է թուղթը շատ աւելի առաջ, քան ստացել է հրաւէր։

Ինչ վերաբերում է «չինօվնիկ» խօսքին, մենք խորհուրդ կը տայինք «Վտակին» չը մոռանալ և արձանագրել իր տարեգրութիւնների մէջ, թէ նրա այժմեան գլխաւոր աշխատակիցներից մէկը, որ իբր թէ պէտք է պաշտպան հանդիսանար դպրոցական յանձնաժողովի մէջ հայոց եկեղեցու իրաւունքներին, դեռ մի քանի տարի առաջ և էնց այն տարին, երբ գօլիցինեան բռնակալութիւնը գրաւեց հայոց եկեղեցիների և դպրոցների կալուածները, կատարում էր Էջմիածնում պրօկուրօրի (արխի-չինօվնիկի) պաշտօն և խորհուրդ էր տալիս թէ կաթողիկոսին, թէ սինօդին նախ կատարել Գոլիցինի պահանջը և ապա միայն բողոքել։ Եւ այդպիսի ողորմելիներ իր շարքերի մէջ ունեցող մի թերթ յանդգնում է այսօր ուրիշներին մեղադրել չինօվնիկութեան և սերվիլիզմի մէջ։ Եւ, վերջապէս, չէ՞ որ պ. Ս. Տիգրանեանը խոյս տուեց մասնակցել դպրոցական յանձնաժողովի նիստերին, հէնց որ ստացաւ Պետերբուրգում չինօվնիկի պաշտօն…։

Գոնէ լռելու ամօթ ունեցէք՝ նախ քան ուրիշների վրա քարեր նետելը։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

Ներքին

23 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ «Россія» լրագիրը տպել է հետևեալ յօդուածը.

«Այն մտամակցութիւնը, որ ունենում են Ռուսաստանի և Մեծ-Բրիտանիայի միապետները իրանց պետութիւնների կեանքում, կրկնապատկում է նրանց կատարած քաղաքավարութեան և անձնական բարեկամութեան նշանակութիւնը։ Այդ իսկ պատճառով զարմանալի չէ, որ ռուս և արտասահմանեան հասարակական կարծիքները առաջիկայ տեսակցութիւնը մեկնում են իբրև առանձին քաղաքական կարևորութեան մի դէպք, որպիսին կարող է հանդէս բերել անգամ միջազգային նոր դաշնադրութիւններ»։ Ապա լրագիրը խօսում է Ռուսաստանի և Անգլիայի դաշնադրութեան մասին։

---

*) Տես «Մշակ» № 111

Մայիսի 26-ին, առևտրի մինիստրի նախագահութեամբ, բացվում է արդիւնաբերութեան ներկայացուցիչների համագումարը։

Արտաքին

23 մայիսի

ԼՈՆԴՈՆ։ Համայնքների պալատում Գրէյը բացատրեց, որ Ռուսաստանի մասնակցութիւնը շաքարի պայմանագրում ողջունելի է թէ քաղաքական և թէ տնտեսական տեսակէտներից։

ԲԵՐԼԻՆ։ Մինչև օրս պրուսական լանդտագի համար ընտրվել են 121 պահպանողականներ, 55 անկախ պահպանողականներ, 58 նացիօնալիստ-լիբերալներ, 20 ազատ մտածող կուսակցութեան անդամներ, 7 ազատ մտածող միութիւնից, 93 կենտրոնից, 14 լեհ, 6 ս.-դ., 5 անկուսակցականներ։ Անցեալ կազմում ոչ մի սոց.-դեմ. չը կար։

ՊԱՐԻԶ։ Դրէյֆուսին վիրաւորողը նացիօնալիստ ժուրնալիստ Գրեգօրին է։

ԼՈՆԴՈՆ։ Համայնքների պալատում բանւորական կուսակցութեան անդամ Տօրն հարց տուեց՝ խորհուրդ չի՞ տայ Գրէյը Թագաւորին խաղաղութեան տեսակէտից Ռուսաստան այցելելուն պաշտօնական բնաւորութիւն չը տալ։ Լորդ Պիզը պատասխանեց, որ Գրէյը այդպիսի խորհուրդ Թագաւորին չէ կարող տալ։ Ապա, Տօրնի հարցապնդման, թէ արդեօք այդ հաշտութիւնը այնպէ՞ս պէտք է հասկանալ, որ կառավարութիւնը համամիտ է Ռուսաստանի սպանութիւններին, նախագահը ընդհատեց հռետորին, նկատելով որ այդօրինակ արտայայտութիւնները անտեղի են բարեկամ պետութեան վերաբերութեամբ։

ԼՈՆԴՈՆ։ Մայիսի 22-ին համայնքների պալատում Գրէյը, պատասխանելով պարսից սահմանագլխում ռուսաց զօրքերի վերջին գործողութիւնների մասին ուղղած հարցապնդման, ասաց. «Այդ առիթով ոչ մի հաղորդագրութիւն ռուսաց կառավարութիւնից չէ ստացված։ Մենք կարիք չենք զգում այդ հաղորդագրութիւններին, որովհետև ժամանակաւոր պատժիչ զօրախումբ ուղարկելը Պարսկաստանի անձեռնմխելիութիւնը խախտել չէ նշանակում, կամ մի այնպիսի բան, որի մէջ խառն են նաև անգլիական շահերը»։

Պալատը անցաւ արտաքին գործերի մինիստրութեան բիւջէն քննարկելու։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԺՇԿԱՊԵՏ

Ա. ՔԱԹԱՆԵԱՆ

վերսկսեց ընդունելութիւն
Ներքին եւ Ջղային
հիւանդների

Պեատիգօրսկում, Վերևի բուլվար № 14. տ. իշխ. Գիրէի, Пятигорскъ, Верхній бульваръ, д. кн. Гирей. 30—7

ԲԺԻՇԿ

Գ. Ե. Խօջափարուխով

Կայսերական Նովօրօսիյսկի համալսարանի կաշուի և վեներական հիւանդութիւնների ամբիօնի ասիստէնտը ընդունում է հիւանդներին Պեատիգօրսկում, Ցարսկայա փող., տ. Ռախմալէվիչի, ծաղկանոցի դիմաց։
(կ. ե. հ.) առ. 5—1

ԱՃՈՒՐԴ

Երեքշաբթի, մայիսի 27-ին, առաւօտեան ժամը 11-ին, քաղաքային աճուրդային դահլիճում աճուրդով է ծախվելու տան կահկարասիքը, տիրոջ խնդիրքի համաձայն։ 10-դ քաղաքամաս, Դիդուբիյսկի փողոց, տուն № 18.

„Գուտտենբերգ"

գրավաճառանոցում ծախվում են Ման-Ագատի հետևեալ աշխատութիւնները.

1) «Ինչ է սահմանադրութիւնը» 10 կ.
2) Ալֆրեդ դը Միւսէ, «Տիցիէնի որդին», (Թարգմ. ֆրանս.), վէպ . . 20 կ.
3) Կաուցկի, «Ներկայացուցչական կառավարութիւն», (Թարգմ.) . . 40 կ.
4) «Դաշնակցութիւնը և իր ղեկավարները» . . . . 15 կ.
5) «Յիշողութիւններ Խրիմեանի մասին» . . . . 20 կ.
(օ. մ.) 5—1

ԹԻՖԼԻՍԻ ՆԱՒԹԱՐԴԻՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է պ.պ. բաժնետէրերին, որ 1907 թւի դիվիդենտի վճարումը տեղի կունենայ մայիսի 20-ից հետևեալ կարգով.—Փայերը պէտք է ներկայացվեն ընկերութեան գրասենեակը դրոշմելու համար, իսկ փողը կը վճարվի Թիֆլիսի առեւտրական բանկում՝ ամենայն օր ժամը 12-ից մինչև 1-ը։
20, 25 2—2

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

«ՄԵՍՍԱԺԸՐԻ ՄԱՐԻԹԻՄ»—„MESSAGERIES MARITIMES"

2/15-ին յունիսի մեկնելու է Բաթումից, երեկոյեան ժամը 5-ին, առաջնակարգ „Danube" շոգենաւը, հանդիպելով Տրապիզօն, Սամսօն, Կ. Պօլիս, Դարդանել, Զմիւռնիա, Պիրէյ, Մարսէյլ, Հավր և Լօնդօն։

Ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ՝ մինչեւ Պարիզ, Նիւ-Եօրք եւ Շանհայ (Չինաստանում), Հեռաւոր Արեւելք գնացողների համար, կարելի է ստանալ Թիֆլիսում պակասեցրած գներով։

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւնների համար դիմել՝ ընկերութեան Թիֆլիսի գործակալ պ. Վ. Յակոբեանին, Նախկին Արծրունու գալէրէյում թիւ 127 գրասենեակը, հեռախօս՝ թիւ 608։ Գրասենեակը բաց է՝ 10—2 ժամը ցերեկվայ և 5—7-ը երեկոյեան ամենայն օր, բացի կիրակի օրերից։
1—1

Norddeutscher Lloyd

(Հիւսիս-գերմանական Լլօյդ)
Պօստային և նաւային հաղորդակցութիւն
Բրէմէնի և Նիւ-Եօրքի միջև.

Շաբաթը երկու անգամ

Հինգ-վեց օրվայ՝ ճանապարհորդութիւն ովկիանոսի վրայով։ Բացի դրանից՝

Բրէմէնից—Վալտիմօր
Բրէմէնից—Գալվէստօն
Բրէմէնից—Բրազիլիա
Բրէմէնից—Արգենտինիա
Բրէմէնից—Արևել. Ասիա՝ Աւստրալիա

Լլօյդի նաւերի գեղեցիկ կազմը, առաջնակարգ խոհանոցը և ճանապարհորդների հետ խնամքով վերաբերվելը արդէն յայտնի են ամբողջ աշխարհին։

Հրէայ դաւանութեան ճանապարհորդները Հիւսիսային Լլօյդի անդրատլանտեան նաւերում ստանում են ծիսական կերակուր, որ գտնվում է Բրէմէնի ռաբբիի հսկողութեան տակ։ Բացի դրանից հրէայ ճանապարհորդների համար Բրէմէնում կայ յատուկ հիւրանոց (Stadt Warschau) ծիսական կերակրով, սինագօգով և ընթերցարանով։

Բացատրութիւններ տրվում են բոլոր լեզուներով։ Տեղեկութիւններով դիմել հետևեալ հասցէով.

ԳԵՐՄԱՆԻԱ, ԲՐԷՄԷՆ.
Հիւսիս-գերմանական Լլօյդ
(Bremen, Norddeutscher Lloyd)
7—3

ՀՐԱՒԷՐ

Ձգրաշէնի ս. Աւետեաց եկեղեցու հոգաբարձութիւնը հրաւիրում է յարգելի ծխականներին շնորհ բերել մայիսի 25-ին, ժամը 12-ին, պատարագից յետոյ, ընդհանուր ծխական ժողովի՝

1) քննելու հոգաբարձութեան հրաժարականի շարժառիթը.

2) ընտրելու 4 նոր հոգաբարձուներ՝ Փոխարքայից տրված ժամանակաւոր կանոնների 3-դ կէտի համաձայն։

(չ. կ.) 2—2

ՄԱՆԹԱՇԵԱՆ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Հիմնված Թիֆլիսի առեւտր. ընկերութիւնից

Պատրաստական (հանրակրթական) դասարանում ընդունվում են առանց քննութեան այն տղաները, որոնք կը ներկայացնեն վկայական իրանց դասընթացքն աւարտելու մասին միդասեանից ոչ ստորին, իսկ առաջին դասարան ընդունվում են երկդասեան քաղաքային կամ գիւղական դպրոցներում աւարտածները, կամ թէ համապատասխան քննութիւն տուողները։

Ընդունելութեան քննութիւններ լինելու են յուլիսի 3-ին և 4-ին, առ. 9 ժամից։

Ուսման վճարն է 15 ր. կիսամեակի համար։ Խնդիրների ընդունելութիւնը և տեղեկութիւնների տալը տեղի են ունենում ամեն օր Թիֆլիսի առևտրական դպրոցի դիւանատանը, ցերեկվայ 9 ժամից մինչև 1 ժամը և պօստով։

Դպրոցը գտնվում է Թիֆլիսի առևտրական դպրոցի շինութեան մէջ։
(ու. կ.) 6—3

Մի այրի կին

(Զօկ, Զամանեանց հարս),

որը ունի 2 երեխայ, ինքը շատ տկար և թշուառ վիճակի մէջ է, խնդրում է բարեբար անձանց օգնել իրան մինչև իր առողջանալը, որպէսզի այնուհետև հնարաւորութիւն ունենայ աշխատել և պահել իր զաւակներին, ինչպէս մինչև այժմ։ Նպաստը ուղղել՝ Елизаветинская ул. № 48. Լ. Պ.-ին կամ «Մշակի» խմբագրատուն։
(չ. ու. կ.) 3—2

ՀՐԱՒԷՐ

Տափի-Թաղի (Բաժոյեան) ս. Գէորգ եկեղեցու հոգաբարձութիւնը պատիւ ունի հրաւիրելու մեծարգոյ ծխականներին տարեկան ընդհանուր ժողովի, որը նշանակված է մայիսի 25-ին, կիրակի, առաւօտեան ժամը 11-ին ս. Նշանի դպրոցում։

Ընդհանուր ժողովի զբաղմունքներն են՝

1. Եկեղեցու 1907 թ. գործունէութեան հաշւետուութիւնը, վերստուգիչ յանձնաժողովի զեկուցման հետ միասին։
2. 1907 թ. հաշւի և ներկայ 1908 թ. նախահաշւի քննութիւն և հաստատութիւն։
3. Պաշտօնեաների գործավարութեան առիթով տեղի ունեցած թիւրիմացութիւնները պարզելու։

Ծանօթութիւն.—Հրաւէրը և հաշիւը նախահաշւի հետ միասին յանձնված է պօստին այն ծխականների համար, որոնք անձամբ չեն ստացել։
(հ. շ. կ.) 3—3

Հրաւէր

Մողնու եկեղեցու ծխական հոգաբարձութիւնը այսու յայտնում է ծխականներին, որ կիրակի, մայիսի 25-ին, ժամը 11-ին, պատարագից յետոյ եկեղեցու մէջ կայանալու է ծխական ընդհանուր ժողով։

Քննութեան առարկաներն են.

1) 1906/7 թ. հաշւետուութիւնը։
2) Զեկուցում Գայիանեան դպրոցի այժմեան դրութեան մասին (տնտեսական և ուսումնական)։
3) Ընտրութիւն հոգաբարձութեան չորս անդամի առաջիկայ եռամեակի համար (1908—1911 թ.)։
4) Ընտրութիւն վերստուգիչ յանձնաժողովի։
5) Զեկուցում դպրոցական շէնքի կառուցման մասին։
6) Զեկուցումն երէցփոխի՝ իր հաշիւների մասին։

Խնդրվում է ծխականներին անպատճառ ներկայ լինել։
(շ. կ.) 2—2

«ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»
Թիֆլիսում, վաճառվում են.

Սունդուկեան Գ. Եւայլն կամ նոր Դիոգինէս, կատակ. երկու արարուածով գ.	— 40 կ.
Սունդուկեան Գ. Ժորժ Դանդէն կամ շփոթված ամուսինը, կատակերգ. երեք արարուածով	— 40 »
Աճառեան, Արցունքի հովիտը, դրամա չորս գործող	— 35 »
Աւետիսեան Գ. Ք. Տան պատգամներ	— 50 »
Բուդաղեան բժ., Երկու խօսք գիւղացուն, ...	— 10 »
Մելիք-Շահնազարեան, Փնջիկ, նուէր մանուկներին, ...	— 15 »
Մելիք-Սողոմոնեան, Արեան Ջահեր, ...	— 50 »
Չոպանեան Ա., Մկրտիչ Պէշիկթաշլեանի կեանքն ու գործը, . . .	2 — »
Պատմուածքներ կենդանիների կեանքից, պատկերազարդ	— 40 »
Ջանեան, Բացվող ծաղիկներ	— 50 »

1—1

ԿՐԱԿԻՑ ԿԱԼՈՒԱԾՔՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

յայտնում է ի գիտութիւն ընկերութեան պ. պ. անդամների, որ կիրակի, ներկայ տարւայ յուլիսի 10-ին, ցերեկվայ 11 ժամին քաղաքային դումայի դահլիճում կայանալու է

ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ներկայ մայիսի 18-ին չը կայացածի փոխարէն, և այդ ժողովում, որպէս և մայիսի 18-ի ժողովում, պէտք է միայն կատարվի վարչութեան մի անդամի ընտրութիւնը վարչութեան նախագահի պաշտօնի համար և վերստուգիչ յանձնաժողովի անդամների մի կանդիդատի ընտրութիւնը։

Ուստի վարչութիւնը պատիւ ունի ծանուցանելու պ. պ. անդամներին, որ, ընկերութեան կանօնադրութեան § 27-ի հիման վրա, նշանակված ժողովը կը կայանայ, յամենայն դէպս, և կը համարվի օրինական, չը նայելով ժողովին ներկայ եղող անդամների թւին։ 2—1

КАВКАЗСКІЯ МИНЕРАЛЬНЫЯ ВОДЫ:

Министерство Торговли и Промышленности.

НАТУРАЛЬНЫЯ СТОЛОВЫЯ ВОДЫ:

„НАРЗАНЪ" Кисловодскъ.
„ЕССЕНТУКИ" № 20

Продажа вездѣ. ● Главный складъ въ Пятигорскѣ.

ПРЕЙСЪ-КУРАНТЫ БЕЗПЛАТНО.

(17, 25, 2, 9) 82,038 27—2

ДАМЫ И ДѢВИЦЫ!
Если желаете всегда блистать
КРАСОТОЮ,
МОЛОДОСТЬЮ,
ЗДОРОВЬЕМЪ,
употребляйте непремѣнно

АНГЛІЙСК. ПАТЕНТЪ
BY ROYAL LETTERS PATENT

Кремъ „КАЗИМИ" Метаморфоза

Кремъ „КАЗИМИ" БЕЗСПОРНО-РАДИКАЛЬНО удаляетъ ВЕСНУШКИ, УГРИ, ПЯТНА, МОРЩИНЫ, и дѣлаетъ кожу лица СВѢЖЕЙ И ЮНОЙ.

ПРОДАНО УЖЕ БОЛѢЕ МИЛЛІОНА БАНОКЪ.

Въ ТЫСЯЧАХЪ писемъ представительницы прекраснаго пола БЛАГОДАРЯТЪ Г. „КАЗИМИ" за его блестящее изобрѣтеніе, СОХРАНИВШЕЕ И МНОГИМЪ ВЕРНУВШЕЕ ихъ обаяніе.

Для огражденія себя отъ покупки навязываемыхъ подражаній и фальсификатовъ обращайте особое вниманіе на слѣдующіе отличительные признаки Крема „КАЗИМИ" Метаморфоза: 1) на внутренней сторонѣ банки бѣлую, рельефную подпись Cazimi, 2) АНГЛІЙСК. ПАТЕНТЪ, 3) рисунокъ головки мальчика съ надписью „ВСЕРОССІЙСКАЯ ВЫСТАВКА 1896 г." и 4) приложенный къ банкѣ рисунокъ „ИСТОЧНИКЪ КРАСОТЫ", утвержденный Департ. Торг. и Мануфакт. за № 4683.

23, մ. 5, 25) 5—3

ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ ԿՕՃԿԵՂԷՆ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽԱՆԻԿ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿ.

Ամեն տեսակ մօդային ձևերի. գտնվում է բոլոր յայտնի մագազիններում։

ФАБРИЧНОЕ КЛЕЙМО
С.ПЕТЕРБУРГЪ.

Իսկականը այս կլէյմօն ունի իր վրա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
ՄՕՍԿՎԱՅՈՒՄ
ՐԻԳԱՅՈՒՄ
ԿԻԵՎՈՒՄ

ԽԱՐԿՕՎՈՒՄ
ՕԴԵՍՍԱՅՈՒՄ
ՌՕՍՏՕՎՈՒՄ Դ/Վ
ԿԱԶԱՆՈՒՄ

ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳՈՒՄ
ԻՐԿՈՒՏՍԿՈՒՄ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՏԱՇԿԷՆՏՈՒՄ

ԳՈՒՄԱՐՈՎ ՎԱՃԱՌՔԸ
կատարում է
„ԼԷՕՊՕԼԴ ՆԵՑՇԵԼԼԵՐ"
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏՈՒՆԸ

Նիժէգօրօդեան տօնավաճառում
Իրբիտեան տօնավաճառում

ԹԻՖԼԻՍԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ ԳՏՆՎՈՒՄ Է ԵՐԵՒԱՆԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻ ՎՐԱ.

ԱՅԴՏԵՂ ԿԱՅ ՊԱՀԵՍՏ ԿԱՇՈՒԵՂԷՆԻ Ռուսական և արտասահմանեան արդիւնաբերութեան
ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐԻ Ռուս-ամերիկական ռետին. մանուֆակտուրային ընկերութեան
Արեւմ եւ Ապրանքներ կօշկեղէնի համար

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՄԵԽ. ԱՐԴԻՒՆԱԲ. ԸՆԿԵՐ. (հ. կ.) 100—30

Типографія „Экономія" Авака Мугдусіакспова С-съми. Большая Банкская ул. № 3.